22
ՆՈՅԵՄԲԵՐԻ
2019

Luys Lnyu®

ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ ՍՏԵՂԾՎԱԾ ՃԳՆԱԺԱՄԸ 2

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՍՑԵՆԱՐՆԵՐԸ 8

2.1. Իրանի կողմից Արաբական թերակղզու շուրջ գտնվող նեղուցների արգելափակում՝ «լցանավերի պատերազմ» 8

2.2. Անուղղակի պատերազմ տարածաշրջանում իրանամետ և հակաիրանական ուժերի միջև՝ առանց ԱՄՆ-ի ուղղակի մասնակցության 16

2.3. ԱՄՆ-ի կողմից Իրանի նկատմամբ թիրախային հարվածներ՝ առանց «ռեժիմի փոփոխության» մտադրության 20

2.4. Պատահականության հետևանքով պատերազմի բռնկում՝ հնարավոր ապոկալիպտիկ հետևանքներով 21

2.5. Ամերիկյան ուղղակի ներխուժում՝ Իրանում «ռեժիմի փոփոխության» նպատակով 23

2.6. Իրավիճակի շարունակական լարում մինչև 2020 թվականին սպասվող ԱՄՆ նախագահական ընտրությունները, այնուհետև բանակցությունների վերսկսում: 25

3. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ 26

3.1. Ռուսաստանի Դաշնություն 26

3.2. Ադրբեջան, Թուրքիա, Վրաստան 28

4. ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ 29

5. ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 33

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 37

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին շրջանում տարածաշրջանում տիրող աշխարհաքաղաքական իրադրությունը միջազգային փորձագետների կողմից գնահատվում է որպես ճգնաժամային: Մինչ Հայաստանում հասարակական ուշադրությունը սևեռված է ներքաղաքական օրակարգի վրա, մեր սահմաններից ոչ այնքան հեռու տեղի են ունենում Հայաստանի համար լուրջ ռազմաքաղաքական, տնտեսական սպառնալիքներ պարունակող իրադարձություններ: Այս համատեքստում հատկապես ուշագրավ են Իրանի շուրջ ծավալվող վերջին զարգացումները:

Այս տարվա մայիս-հունիս ամիսներին Իրանի շուրջ լարվածության նոր ալիք բարձրացավ, որը տարածաշրջանում պայթյունավտանգ իրավիճակ ստեղծեց: Մինչ փորձագետները փորձում են կանխատեսել, թե որքանով է հավանական ստեղծված իրավիճակի պատերազմական ելքը, իրադարձությունները ծավալվում են մեծ արագությամբ, հաճախ անկանխատեսելի զարգացումներով: Անկախ Իրանի շուրջ ստեղծված այս հերթական ճգնաժամի հետագա ընթացքից՝ մի բան ակնհայտ է՝ ԱՄՆ-Իրան հակամարտությունը շարունակվում է արդեն շուրջ 40 տարի, և այդ հակամարտության կարգավորման լավատեսական տարբերակները շատ քիչ են: Հայաստանի Հանրապետությունը պետք է պատրաստ լինի բոլոր սցենարներին և հաշվարկի դրանցից յուրաքանչյուրի ռիսկերն ու հնարավորությունները:

Այս վերլուծության նպատակն է ուսումնասիրել Իրանի շուրջ ստեղծված իրավիճակի առանձնահատկությունները և վեր հանել Հայաստանի համար հնարավոր սպառնալիքները՝ ճգնաժամը դիտարկելով տարածաշրջանային համատեքստում և գնահատելով միջազգային դերակատարների վարքագիծը: Հարկավոր է հասկանալ, թե ստեղծված իրավիճակը և հնարավոր զարգացումները ինչպիսի տնտեսական, քաղաքական, ռազմական հետևանքներ կարող են ունենալ Հայաստանի համար, Իրանի դեմ հնարավոր պատերազմը ինչպես կանդրադառնա Արցախյան հակամարտության վրա: Միաժամանակ շատ կարևոր է, թե տարածաշրջանում լարվածության աճը ինչպիսի ազդեցություն կունենա Հայաստանի անմիջական հակառակորդների՝ Թուրքիայի և Ադրբեջանի վարքագծի վրա, որոնք վերջին շրջանում առանց այդ էլ խորացրել են ռազմական համագործակցությունը և խստացրել ռազմատենչ հռետորաբանությունը:

Վերլուծության գլխավոր նպատակն է Հայաստանի հասարակության, փորձագիտական և քաղաքական շրջանակների ուշադրությունը հրավիրել ստեղծված իրավիճակից բխող սպառնալիքների վրա՝ ընդգծելով այդ սպառնալիքներին

դիմակայելու համար հասարակությանը կոնսոլիդացնելու, ներքին պառակտումը հաղթահարելու կարևորությունը և Հայաստան-Արցախ համագործակցությունը առավել ներդաշնակեցնելու անհրաժեշտությունը:

1. ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ ՍՏԵՂԾՎԱԾ ՃԳՆԱԺԱՄԸ

ԱՄՆ-Իրան հարաբերություններում լարվածությունը սկսեց խորանալ, երբ 2018թ. մայիսի 8-ին ԱՄՆ նախագահ Թրամփը հայտարարեց 2015թ. Իրանի, Միացյալ Նահանգների և 5 այլ պետությունների միջև կնքված Գործողությունների համատեղ համապարփակ ծրագրի (ԳՀՀԾ) համաձայնագրից (Միջուկային համաձայնագրից) դուրս գալու և Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցներ սահմանելու մասին: Թրամփի վարչակազմը Իրանի նկատմամբ որդեգրել է այսպես կոչված «առավելագույն ճնշում» (maximum pressure) մարտավարությունը, որի շրջանակներում պարբերաբար խստացնում է հակաիրանական պատժամիջոցները:

Դեռ 2018թ. նոյեմբերին ԱՄՆ-ը պատժամիջոցներ սահմանեց Իրանից նավթի միջազգային արտահանման վրա՝ բացառություն սահմանելով 8 ներկրող երկրների համար, սակայն 2019թ. մայիսի 2-ին Վաշինգտոնը վերացրեց նաև այդ բացառությունը: ԱՄՆ-ն Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻԻՀՊԿ) պաշտոնապես ճանաչեց որպես ահաբեկչական կազմակերպություն, Իրանի նկատմամբ նոր՝ ավելի խիստ պատժամիջոցներ սահմանեց, որոշեց Մերձավոր Արևելքում զորքերի թիվն ավելացնել 5000-ով, ինչպես նաև Բ-52 ռմբակոծիչներով բեռնված ավիակիր ուղարկեց տարածաշրջան[1]:

Չնայած ամերիկյան կողմի կոշտ քայլերին՝ Իրանը երկար ժամանակ որդեգրել էր այսպես կոչված «ռազմավարական համբերություն» (strategic patience) քաղաքականությունը: Թեհրանը, թեև Վաշինգտոնի քայլերին փորձում էր համարժեք հակաքայլերով պատասխանել, այնուամենայնիվ շարունակում էր հավատարիմ մնալ Միջուկային համաձայնագրով իր ստանձնած հիմնական պարտավորություններին: Իրանի այս քաղաքականությունը նաև պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ երկրի իշխանությունները դեռևս պահպանում էին Միջուկային համաձայնագրի կենսագործման հույսը:

Թեհրանը մեծ հույսեր էր կապում ԵՄ-ի հետ, որը հայտարարել էր ԳՀՀԾ-ին հավատարիմ մնալու և ամերիկյան պատժամիջոցները շրջանցող մեխանիզմներ

[1] A Path to War With Iran. How Washington's Escalation Could Lead to Unintended Catastrophe By Philip H. Gordon (May 20, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.foreignaffairs.com/articles/iran/2019-05-20/path-war-iran (այցելվել է 08.11.2019թ.):

գտնելու մտադրության մասին: Նման մեխանիզմ պետք է դառնար առևտրային փոխանակումների աջակցության գործիքի (Instrument in Support of Trade Exchanges INSTEX) ներդրումը: Սակայն այս գործիքը չկարողացավ արդարացնել Թեհրանի սպասելիքները, քանի որ թեև արտահայտում էր միջուկային պայմանագրի վերաբերյալ ԵՄ քաղաքական դիրքորոշումը, տնտեսական տեսանկյունից ի վիճակի չէր զսպել ԱՄՆ պատժամիջոցների ազդեցությունը ԵՄ-Իրան տնտեսական հարաբերությունների վրա[2]: Եվրոպական բիզնեսը, վախենալով ԱՄՆ պատժամիջոցների տակ հայտնվելու հեռանկարից, խուսափում է Իրանում լուրջ գործունեություն ծավալելուց, ինչի արդյունքում փաստացի չի ապահովվում նաև ԳՀՀԾ-ով ԵՄ ստանձնած պարտավորությունների կատարումը:

Նախքան իրանական նավթի ներմուծման նկատմամբ ամերիկյան պատժամիջոցների ամբողջական (առանց 8 երկրների համար նախատեսված բացառության) կիրառումը, Իրանը հնարավորություն ուներ որոշակի եկամուտներ ստանալու նավթի արտահանումից՝ հատկապես դեպի Չինաստան, Թուրքիա, Հնդկաստան, Ճապոնիա, Իրաք և այլն: Սակայն 2019թ. մայիսին ԱՄՆ-ի կողմից այս բացառությունը վերացնելուց հետո, նշված երկրները էականորեն կրճատեցին իրանական նավթի ներմուծումը, ինչը շոշափելիորեն նվազեցրեց ԻԻՀ կառավարության եկամուտները. ըստ Իրանի հարցերով ԱՄՆ հատուկ ներկայացուցիչ Բրայան Հուկի՝ պատժամիջոցների հետևանքով Իրանի իշխանությունները զրկվել են 50 մլրդ ԱՄՆ դոլար եկամտից[3]: 2018թ. Իրանի տնտեսության անկումը կազմել է ավելի քան 4%, իսկ 2019-ին ակնկալվում է 6% անկում[4] [5]: Փաստորեն Իրանը հայտնվեց մի իրավիճակում, երբ միջուկային պայմանագրի դրույթներին հավատարիմ մնալով՝ չէր կարողանում օգտվել այդ համաձայնագրով նախատեսված հնարավորություններից, ինչը ուժեղացրեց նաև ներքին դժգոհությունը իշխանությունների վարած արտաքին քաղաքականության նկատմամբ: Սա հանգեցրեց Թեհրանի կողմից պատասխան քայլերի:

---

[2] The rise of tensions between Iran and Europe: the Trump factor (1st March 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.iiss.org/blogs/analysis/2019/03/iran-and-europe-rise-of-tensions (այցելվել է 08.11.2019թ.):

[3] США оценили в $50 млрд потери Ирана из-за санкций, հասանելի է հետևյալ հղումով՝ https://tass.ru/ekonomika/6595505 (այցելվել է 08.11.2019թ.):

[4] Iran GDP - Gross Domestic Product, հասանելի է հետևյալ հղումով՝ https://countryeconomy.com/gdp/iran (այցելվել է 08.11.2019թ.):

[5] Taking on Tehran
The Trump administration's pressure on Iran has created an opening for diplomacy.
Article by Richard N. Haass (June 14, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.cfr.org/article/taking-tehran (այցելվել է 08.11.2019թ.):

Մայիսի 8-ին ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին հայտարարեց, որ Թեհրանը դադարեցնում է միջուկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների մի մասի կատարումը: Մասնավորապես, Ռոհանին հայտնեց հարստացված ուրանի պաշարները արտահանելու պարտավորությունը դադարեցնելու մասին, ինչպես նաև ԳՀՀԾ-ի պայմանագիրը ստորագրած կողմերին 60 օր ժամանակ տվեց՝ իրանական նավթային և բանկային համակարգը ամերիկյան պատժամիջոցներից պաշտպանելու համար: Հակառակ դեպքում Թեհրանը խոստացավ նախանշված ժամկետից հետո գերազանցել ուրանի հարստացման ծավալների շուրջ պայմանագրով նախատեսված սահմանափակումները[6]:

Եվրոպացի փորձագետները Թեհրանի նման վարքագիծը բացատրում են նրանով, որ Իրանի տնտեսական կայունությունը պահպանելու համար անհրաժեշտ է առնվազն օրական 1,5 մլն բարել նավթ արտահանել, մինչդեռ ամերիկյան պատժամիջոցների արդյունքում այդ ծավալը չի գերազանցում օրական 700 000 բարելը[7]: Ինչպես ցույց տվեց իրադարձությունների հետագա ընթացքը, ԵՄ-ը այդպես էլ չկարողացավ Իրանի կորուստները փոխհատուցելու հստակ քաղաքականություն իրականացնել, ընդհակառակը՝ ամերիկյան պատժամիջոցների հետևանքով կտրուկ վատթարացան ԵՄ-Իրան տնտեսական հարաբերությունները:

Որպես օրինակ կարելի է նշել Եվրոպայի ամենամեծ տնտեսության՝ Գերմանիայի և Իրանի միջև առևտրաշրջանառության կտրուկ անկումը. 2019թ. առաջին 4 ամիսների ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն կրճատվել է 49%-ով[8]: Արդյունքում Իրանը սկսեց կյանքի կոչել Ռոհանիի մայիսի 8-ի հայտարարությունները: Հուլիսի 2-ին Իրանը հայտարարեց Միջուկային համաձայնագրով սահմանված ուրանի հարստացման սահմանափակումը

[6] Iran announces partial withdrawal from nuclear deal. A year after Trump pulled US out of 2015 agreement, Tehran takes 'reciprocal measures', հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.theguardian.com/world/2019/may/07/iran-to-announces-partial-withdrawal-from-nuclear-deal (այցելվել է 08.11.2019թ.):

[7] Iran announces it will stop complying with parts of landmark nuclear deal, By Tamer El-Ghobashy, Michael Birnbaum and Carol Morello (May 9, 2019) հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.washingtonpost.com/world/iran-to-take-steps-to-reduce-its-commitment-to-landmark-nuclear-deal/2019/05/07/90cc3b1c-70fe-11e9-9331-30bc5836f48e_story.html?noredirect=on&utm_term=.75e1f9051b9c (այցելվել է 08.11.2019թ.):

[8] Germany-Iran trade collapses under U.S. sanctions: report (June 28, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.reuters.com/article/us-usa-iran-germany-trade/germany-iran-trade-collapses-under-us-sanctions-report-idUSKCN1TT040 (այցելվել է 08.11.2019թ.):

գերազանցելու մասին[9], իսկ հուլիսի 8-ին լրացավ Թեհրանի կողմից ԵՄ երկրների համար սահմանված 60-օրյա ժամկետը:

Տարածաշրջանում իրադրությունը հատկապես սրվեց մայիսի 12-ին Պարսից ծոցում 4 լցանավերի վրա հարձակումներից հետո, երբ հայտնի դարձավ, որ պայթյունների հետևանքով վնասվել են Սաուդյան Արաբիայի՝ երկու, ԱՄԷ-ի և Նորվեգիայի՝ մեկական լցանավեր[10]: Կարճ ժամանակ անց անօդաչու թռչող սարքերի միջոցով ռմբակոծվեցին Սաուդյան Արաբիայի նավթային ենթակառուցվածքները, մասնավորապես՝ վնասվեցին նավթատար խողովակներ[11]: ԱՄՆ-ը, Սաուդյան Արաբիան և ԱՄԷ-ն տեղի ունեցածի պատասխանատվությունը դրեցին Իրանի և տարածաշրջանի իրանամետ ուժերի, այդ թվում՝ Եմենի հուսիթների վրա:

Հունիսի 13-ին Օմանի ծոցում հարձակման ենթարկվեցին ևս 2 լցանավեր, որից հետո ԱՄՆ-ը տեսանյութ հրապարակեց՝ այն մեկնաբանելով որպես հարձակման համար Իրանի պատասխանատվության ապացույց: ԱՄՆ-ին աջակցեցին Մեծ Բրիտանիան և Սաուդյան Արաբիան, իսկ Իրանի ԱԳՆ-ն այդ մեղադրանքները հերքեց: Հունիսի 20-ին Իրանի ՀՈՒ-ն խոցեց ԱՄՆ ՌԾՈՒ RQ-4 հետախուզական անօդաչու թռչող սարքը ($100-200 մլն արժողությամբ), որից հետո ԱՄՆ-ը, ըստ նախագահի հայտարարության, Իրանի տարածքում 3 օբյեկտների վրա կետային հարվածներ հասցնելու ռազմական գործողություն էր պատրաստել: Սակայն Թրամփի խոսքերով՝ ինքը հարվածից 10 րոպե առաջ այն կասեցրել էր՝ համարելով, որ հարվածի հետևանքով ակնկալվող զոհերի թիվը (շուրջ 150) անհամարժեք կլիներ ԱԹՍ-ի խոցման հետևանքներին:

---

[9] Iran breaches uranium stockpile limit set by nuclear deal, By JON GAMBRELL and AMIR VAHDAT (July 2, 2019) հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.apnews.com/3e2d08074a4f4256ba6ee379cdb168f7 (այցելվել է 08.11.2019թ.):

[10] Claim of Attacks on 4 Oil Vessels Raises Tensions in Middle East, By Vivian Yee (May 13, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.nytimes.com/2019/05/13/world/middleeast/saudi-arabia-oil-tanker-sabotage.html (այցելվել է 08.11.2019թ.):

[11] A Path to War With Iran. How Washington's Escalation Could Lead to Unintended Catastrophe, By Philip H. Gordon (May 20, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.foreignaffairs.com/articles/iran/2019-05-20/path-war-iran (այցելվել է 08.11.2019թ.):



[12]

Այս իրադարձություններից հետո՝ հունիսի 24-ին ԱՄՆ նախագահը և ֆինանսների նախարարը Իրանի դեմ նոր պատժամիջոցներ սահմանելու մասին հայտարարություններ տարածեցին: Դրանք սահմանվեցին Իրանի գերագույն հոգևոր առաջնորդ Այաթոլլահ Ալի Խամենեիի, Իրանի արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆի, ինչպես նաև Իսլամական հեղափոխության պահպանների կորպուսի 8 զորահրամանատարների դեմ, այդ թվում՝ այն գեներալի, որը ենթադրաբար պատասխանատու է հունիսի 20-ին ամերիկյան հետախուզական անօդաչու թռչող սարքի ոչնչացման համար[13]: Ամերիկյան պատժամիջոցներին հետևեցին երկուստեք մեղադրանքները և ռազմատենչ հռետորաբանության ուժեղացումը:

Հուլիսի 4-ին բրիտանական հատուկ ուժերը Ջիբրալթարում ձերբակալեցին շուրջ 2 մլն բարել նավթով բեռնված իրանական նավ, որը ըստ բրիտանական աղբյուրների՝ պատրաստվում էր նավթ մատակարարել Սիրիային՝ չնայած այդ երկրի դեմ ԵՄ և ԱՄՆ պատժամիջոցներին ու նավթի ներմուծման արգելքին[14]: Սրան հետևեց Իրանի կոշտ արձագանքը. Թեհրանի պնդմամբ նավթը մատակարարվում էր ոչ թե Սիրիա, այլ

[12] The Strait of Hormuz: A U.S.-Iran Maritime Flash Point. By CFR.org Editors (June 18, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.cfr.org/article/strait-hormuz-us-iran-maritime-flash-point (այցելվել է 08.11.2019թ.):

[13] ԱՄՆ նոր հակահրանական պատժամիջոցներն ընդմիշտ փակում են դիվանագիտության ուղին. Իրանի ԱԳՆ (25.06.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://news.am/arm/print/news/520314.html (այցելվել է 08.11.2019թ.):

[14] U.K. Marines Seize Tanker, Causing Diplomatic Row With Iran. By Verity Ratcliffe , Julian Lee and Arsalan Shahla July(4, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.bloomberg.com/news/articles/2019-07-04/gibraltar-says-it-seized-oil-tanker-carrying-crude-to-syria (այցելվել է 08.11.2019թ.):

Ջիբրալթար: Մի քանի օր անց բրիտանական աղբյուրները հաղորդեցին, որ Իրանը փորձել է Հորմուզի նեղուցում կանգնեցնել բրիտանական նավթատար նավ, սակայն դրան ուղեկցող բրիտանական ռազմանավի միջամտությունից հետո իրանցիները հրաժարվել են այդ քայլից: Ամերիկյան ԶԼՄ-ները հայտնեցին, որ ԱՄՆ իշխանությունները ունեն նաև այդ միջադեպը ապացուցող տեսանյութ, իսկ Թեհրանը այս միջադեպի մասին տեղեկատվությունը նույնպես հերքեց[15]:

Հուլիսի 20-ին տեղեկատվություն տարածվեց, որ Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմածովային ուժերը ձերբակալել են բրիտանական "Stena Impero" լցանավը[16]: Այս միջադեպին ի պատասխան՝ ՄԵԾ Բրիտանիան հանդես եկավ նավագնացության պաշտպանության եվրոպական կոալիցիայի ձևավորման առաջարկությամբ[17]:

Իրանի և տարածաշրջանում վերջինիս հակառակորդների հարաբերությունները շարունակեցին սրվել նաև հաջորդ ամիսների ընթացքում: Սեպտեմբերի 14-ի հարձակումները Սաուդյան Արաբիայի նավթային օբյեկտների վրա, որի պատասխանատվությունը Սաուդյան Արաբիան և վերջինիս դաշնակիցները փորձեցին դնել Իրանի վրա, ավելի մեծացրին լարվածությունը: Ի վերջո այդ բոլոր հակասությունները իրենց արտացոլումը գտան ՄԱԿ-ի ԳԱ հերթական նստաշրջանի ընթացքում՝ տարածաշրջանի երկրների ներկայացուցիչների կողմից հնչեցված փոխադարձ մեղադրանքների և սպառնալիքների տեսքով:

ԱՄՆ-Իրան հարաբերությունների լարման այս նոր փուլը մեծ ռիսկեր է պարունակում տարածաշրջանի համար, ուստի կարևոր է պատկերացում կազմել իրավիճակի զարգացման հնարավոր սցենարների մասին: Թեման գտնվում է միջազգային փորձագիտական շրջանակների ուշադրության կենտրոնում, հետևաբար շատ են իրավիճակից բխող հնարավոր զարգացումների մասին վերլուծություններն ու կանխատեսումները: Ստորև փորձենք ի մի բերել միջազգային փորձագետների գնահատականները և ներկայացնել ճգնաժամի հետագա ընթացքի ամենահավանական սցենարները:

---

[15] U.K. Navy Intervenes After Iran Tries to Stop British Oil Tanker, By Tim Ross and Anthony Dipaola (July 11, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.bloomberg.com/news/articles/2019-07-11/iran-tries-to-seize-british-tanker-u-k-navy-ship-intervenes (այցելվել է 08.11.2019թ.):

[16] Иран задержал британский танкер в Ормузском проливе. На борту есть россияне (20 июля 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.bbc.com/russian/news-49052216 (այցելվել է 08.11.2019թ.):

[17] Ближневосточная ОБСЕ. Как Россия вступила в конкуренцию за Персидский залив, Марианна Беленькая (25.07.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://carnegie.ru/commentary/79566 (այցելվել է 08.11.2019թ.):

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՍՑԵՆԱՐՆԵՐԸ

Իրանի շուրջ լարվածության աճի համատեքստում միջազգային վերլուծական-փորձագիտական շրջանակները շրջանառության մեջ են դրել իրադարձությունների զարգացման տարբեր սցենարներ: Դրանց շարքում կան ինչպես լավատեսական, այնպես էլ ապոկալիպտիկ կանխատեսումներ, սակայն մի բան ակնհայտ է, որ ցանկացած ընթացք իր անմիջական հետևանքներն է ունենալու ոչ միայն Իրանի, այլև ամբողջ «Մեծ Մերձավոր Արևելքի» վրա: Անդրադառնանք հավանական սցենարներից մի քանիսին:

2.1 Իրանի կողմից Արաբական թերակղզու շուրջ գտնվող նեղուցների արգելափակում՝ «լցանավերի պատերազմ»

Իրադարձությունների զարգացման այս սցենարը թերևս ամենից շատն է նշվում տարբեր վերլուծական կենտրոնների և փորձագետների կողմից: Սա առաջին հերթին կապված է լցանավերի խոցման վերջին միջադեպերի, ինչպես նաև նախկինում ԱՄՆ-Իրան նման առճակատման փորձի հետ: Դեռևս նախորդ դարի 80-ականներին Իրան-իրաքյան պատերազմի ընթացքում այդ երկրների միջև բռնկվել էր առաջին «լցանավերի պատերազմը», որի ընթացքում կողմերը Պարսից ծոցում պարբերաբար խոցում էին նավթով բեռնված՝ միմյանց պատկանող նավերը: Հաճախ հարվածի տակ էին հայտնվում նաև միջազգային բեռնանավերը. 1984-1987թթ. ընթացքում ընդհանուր առմամբ վնասվել են շուրջ 340 նավեր[18]:

Այդ հակամարտությանը ավարտվեց ԱՄՆ-ի ռազմաօդային և Իրանի ռազմածովային ուժերի միջև կարճատև, բայց արյունահեղ առճակատմամբ: Ամերիկյան կողմը գրավեց մի շարք իրանական նավթային պլատֆորմներ, իսկ վճռական բախման ընթացքում ԱՄՆ ՌՕ ուժերը ծանր հարված հասցրին Իրանի նավատորմին՝ կորցնելով ընդամենը մեկ ուղղաթիռ: Փորձագետների գնահատմամբ՝ նման սցենարի կրկնությունը ներկայումս անհնարին է՝ հաշվի առնելով ռազմածովային և հրթիռային ուժերի զարգացման ոլորտում Իրանի նշանակալի ձեռքբերումները[19]: Իրանի հակաօդային ուժերի արդիականացման և լուրջ ձեռքբերումների վկայություն էր ամերիկյան թանկարժեք ԱԹՍ-ի խոցումը, քանի որ նման տեխնոլոգիական հնարավորություններ միայն փոքրաթիվ երկրներ ունեն:

---

[18] Танкерные инциденты: кто моргнёт первым? Иван Тимофеев (17.06.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ http://ru.valdaiclub.com/a/highlights/tankery-kto-morgnyet/ (այցելվել է 08.11.2019թ.):

[19] Танкерные инциденты: кто моргнёт первым? Иван Тимофеев (17.06.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ http://ru.valdaiclub.com/a/highlights/tankery-kto-morgnyet/ (այցելվել է 08.11.2019թ.):

Նավթի համաշխարհային արտահանման 20 տոկոսը բաժին է ընկնում Արաբական ծոցի երկրներին, որի մեծ մասը իրականացվում է Հորմուզի նեղուցով: Այստեղով օրական փոխադրվում է շուրջ 18,5 մլն բարել նավթ[20]: Իրանի մի շարք պաշտոնյաներ բազմիցս սպառնացել են փակել Հորմուզի նեղուցը, եթե Թեհրանը զրկվի սեփական նավթը արտահանելու հնարավորությունից: 2019թ. ապրիլի 22-ին ԱՄՆ նախագահ Թրամփի՝ Իրանից նավթի արտահանումը զրոյի հասցնելու մասին հայտարարությանն ի պատասխան, Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի նավատորմի հրամանատար, ծովակալ Ալիռեզա Թանգշիրին հայտարարել էր, որ եթե Թեհրանը սեփական նավթը արտահանելու հնարավորությունից զրկվի, ապա այդ հնարավորությունը կփակվի բոլորի համար[21]:

Նեղուցի փակումը Իրանի համար Արևմուտքի և Արաբական երկրների վրա ճնշում գործադրելու սակավաթիվ գործիքներից մեկն է: Սա ինքնին չի նշանակում, որ իրանական նավերը այնտեղ հերթապահություն են իրականացնելու և ուղղակիորեն փակելու են դրա մուտքը: Թեհրանը հնարավորություն ունի նեղուցի արգելափակումն իրականացնելու ականապատման, հածանավերի վրա փոքր նավերով պարբերաբար հարձակումներ կազմակերպելու, դրանք հրթիռակոծելու միջոցով[22]: Իրանը կարող է դա անել նաև անուղղակիորեն՝ տարևաճաշրջանում իր դաշնակից ոչ պետական դերակատարների միջոցով, ինչը թույլ կտա խուսափել ԱՄՆ-ի և արաբական երկրների հետ անմիջական առճակատումից:

Դեռ 2019թ. մարտի 6-ին Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտը (IISS) հրապարակել էր ամերիկացի ծովակալ Ջոն Միլլերի հոդվածը, որտեղ վերջինս զգուշացնում էր փետրվարի 24-ին իրանական սուզանավերի ծովային հրթիռների փորձարկումների վտանգավորության մասին: Ըստ նրա՝ այդ հրթիռները Իրանին հնարավորություն են տալիս զգալիորեն ուժեղացնելու դիրքերը Պարսից ծոցում և Հորմուզի նեղուցում. հերթական տանկերային պատերազմի դեպքում Թեհրանը կարող է էական հարվածներ հասցնել միջազգային լցանավերին: Այդ հրթիռները Իրանին հնարավորություն են տալիս անարգել խոցելու բեռնատար

[20] The Strait of Hormuz: A U.S.-Iran Maritime Flash Point, By CFR.org Editors (June 18, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.cfr.org/article/strait-hormuz-us-iran-maritime-flash-point (այցելվել է 08.11.2019թ.):

[21] US–Iran tensions and the oil factor, Mahsa Rouhi, (23rd April 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.iiss.org/blogs/survival-blog/2019/04/us-iran-tensions-oil (այցելվել է 08.11.2019թ.):

[22] How Iran Could Really Hurt America (And the World): Close the Strait of Hormuz, by Edward Chang (June 14, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://nationalinterest.org/blog/buzz/how-iran-could-really-hurt-america-and-world-close-strait-hormuz-62542 (այցելվել է 08.11.2019թ.):

նավերը, ընդ որում բավականին բարդանում են հարվածի հեղինակին բացահայտելու հնարավորությունները[23]:



24

Նեղուցների արգելափակումը Իրանի համար կարող է լինել պարտադրված քայլ, քանի որ պատժամիջոցների խստացման արդյունքում երկրի տնտեսական դրությունը բարելավելու միակ ելքը կարող է դառնալ նավթի գների բարձրացումը: Բացի այդ, այն հնարավորություն կտա տնտեսական բարդություններ ստեղծել ԱՄՆ-ի և տարածաշրջանում վերջինիս դաշնակիցների համար: 2015թ. տվյալներով՝ Հորմուզի նեղուցով փոխադրվել է ծովային առևտրում ներգրավված չմշակված նավթի 30%-ը, իսկ 2016թ. այնտեղով է անցել նավով հեղուկ գազի փոխադրումների ավելի քան 30%-ը: Նեղուցի փակման դեպքում ակնկալվում է նավթի գների կտրուկ աճ. այսպես, լցանավերի վրա հարձակման դեպքերից անմիջապես հետո նավթի համաշխարհային

[23] Iran's new threat to ships in the Gulf, John Miller (6th March 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.iiss.org/blogs/analysis/2019/03/iran-new-anti-ship-missile-test (այցելվել է 08.11.2019թ.):
[24] The Strait of Hormuz: A U.S.-Iran Maritime Flash Point. By CFR.org Editors (June 18, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.cfr.org/article/strait-hormuz-us-iran-maritime-flash-point (այցելվել է 08.11.2019թ.):

գները միանգամից 4%-ով ավելացան, և աճի միտումը որոշակի ժամանակ շարունակեց պահպանվել[25]:

Հորմուզի նեղուցը կենսական նշանակություն ունի տարածաշրջանում Իրանի մրցակիցների՝ առաջին հերթին Սաուդյան Արաբիայի և ԱՄԷ-ի համար, որոնց տնտեսության մեծ մասը խարսխված է ածխաջրածինների արտահանումից ստացվող եկամուտների հետ: Նեղուցի փակման դեպքում այդ երկրները նավթի և գազի արտահանումը կազմակերպելու լուրջ այլընտրանքներ չունեն. միասին վերցրած՝ այս երկու երկրների նավթատար խողովակների հզորությունը կազմում է օրական շուրջ 6.6 մլն բարել, մինչդեռ դրանից միայն 3,9 մլն-ն այս պահին չի օգտագործվում և կարող է լրացվել նեղուցի փակման դեպքում: Ընդ որում, այս խողովակաշարերի անվտանգությունը նույնպես երաշխավորված չէ. մայիսին խողովակաշարերի վրա կատարված հարձակումներից հետո Սաուդյան Արաբիան ստիպված էր կասեցնելու դրանց մի մասի շահագործումը[26]:

Սահմանափակելով Հորմուզի նեղուցով բեռնափոխադրումների իրականացումը՝ Իրանը կարող է յուրօրինակ պատասխան տալ իր դեմ կիրառվող պատժամիջոցներին՝ ներգրավելով համեմատաբար սահմանափակ ռեսուրսներ և կատարելով փոքր ծախսեր: Հորմուզի նեղուցի արգելափակումը կհարվածի ոչ միայն տարածաշրջանի երկրների, այլև համաշխարհային առևտրին՝ խոչընդոտներ ստեղծելով նաև ԱՄՆ տնտեսության համար:

Ներկայումս ԱՄՆ-ը նավթի և գազի պաշարների տեսանկյունից անհամեմատ ավելի ինքնաբավ պետություն է, համեմատած 80-ականների «լցանավերի պատերազմի» ժամանակաշրջանի հետ՝ ավելի քիչ է կախված Պարսից ծոցի երկրներից էներգակիրների ներմուծումից. Միացյալ Նահանգներ ներկրվող նավթի ծավալների ընդամենը շուրջ 6%-ն է ներմուծվում Ծոցի երկրներից: Վերջին տարիներին Նահանգները նույնիսկ ակտիվորեն ավելացնում են ածխաջրածինների՝ հատկապես գազի արտահանման տեմպերը:

Այնուամենայնիվ, Հորմուզի նեղուցի արգելափակումը կազդի նավթի միջազգային գների վրա, ինչն անուղղակի ազդեցություն կունենա նաև ԱՄՆ-ում,

[25] The Strategic Threat from Iranian Hybrid Warfare in the Gulf. By Anthony H. Cordesman (June 13,2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.csis.org/analysis/strategic-threat-iranian-hybrid-warfare-gulf (այցելվել է 08.11.2019թ.):

[26] The Strategic Threat from Iranian Hybrid Warfare in the Gulf. By Anthony H. Cordesman (June 13, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.csis.org/analysis/strategic-threat-iranian-hybrid-warfare-gulf (այցելվել է 08.11.2019թ.):

քանի որ այնտեղ, անկախ սեփական պաշարների առկայությունից, նավթի համար վճարում են համաշխարհային գներով, իսկ նավթի արդյունահանումը Միացյալ Նահանգների տնտեսության կառուցվածքում դժվար է որոշիչ համարել: Այսինքն՝ ԱՄՆ տնտեսության մի շարք ճյուղերի՝ հատկապես արտադրության վրա սա կարող է բացասական ազդեցություն ունենալ:

Հորմուզի նեղուցի արգելափակումը ԱՄՆ-ի տնտեսության վրա կարող է նաև անուղղակի ազդեցություն ունենալ: Բանն այն է, որ Պարսից ծոցից ծովային ճանապարհով հսկայական ծավալների նավթ է արտահանվում ասիական մի շարք արդյունաբերական երկրներ, որոնք ԱՄՆ-ի հետ սերտ տնտեսական հարաբերություններ ունեն: Այդ երկրների մեծ մասը՝ Չինաստանը, Ճապոնիան, Հարավային Կորեան, Վիետնամը, Թայվանը, ներառված են ԱՄՆ-ի ներմուծման 15 ամենախոշոր գործընկերների մեջ: Ասիական երկրները միասին ապահովում են ԱՄՆ ներմուծման 28-30%-ը, իսկ ներմուծվող ապրանքների մեջ մեծ տեղ է գրավում արդյունաբերական արտադրանքը, որի գնագոյացումը կախված է նաև էներգակիրների գներից: Տնտեսագետների հաշվարկով, այստեղից ներմուծման հաշվին ապահովվում է ԱՄՆ-ի ՀՆԱ-ի 4-5%-ը[27]:

Ուշագրավ է, որ պաշտոնական Վաշինգտոնը մի քանի անգամ հայտարարել է, թե Հորմուզի նեղուցի արգելափակումը պետք է մտահոգի առաջին հերթին Արաբական երկրներին, ինչպես նաև Չինասատնին, Հնդկաստանին, Ճապոնիային, Կորեային և տարածաշրջանից նավթ ներմուծող այլ ասիական երկրներին: Մասնավորապես ԱԹՍ-ի հետ կապված ճգնաժամից հետո ԱՄՆ նախագահ Թրամփը իր թվիթերյան էջում այս կապակցությամբ գրել էր. «Չինաստանը Հորմուզի նեղուցից ստանում է իր նավթի 91%-ը, Ճապոնիան՝ 62%-ը»: Թրամփը հարցադրում էր անում, թե ինչո՞ւ նման պարագայում միայն ԱՄՆ-ը պետք է պաշտպանի նեղուցի անվտանգությունը[28]: Նմանատիպ պնդումները հիմնավորվում են ԱՄՆ էներգետիկ անկախությամբ, սակայն ինչպես արդեն նշվեց, այն չի սահմանափակվում միայն ածխաջրածինների ներմուծման ու արտահանման ծավալների պարզ տրամաբանությամբ:

[27] The Strategic Threat from Iranian Hybrid Warfare in the Gulf. By Anthony H. Cordesman (June 13, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.csis.org/analysis/strategic-threat-iranian-hybrid-warfare-gulf (այցելվել է 08.11.2019թ.):

[28] @realDonaldTrump (24 Jun 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://twitter.com/realDonaldTrump/status/1143128642878410752 (այցելվել է 08.11.2019թ.):



29

Իրանի կողմից Հորմուզի նեղուցը արգելափակելու հնարավորությունը դիտարկելիս հարկավոր է ուշադրություն դարձնել նաև մեկ այլ իրողության վրա: Նեղուցի փակումը էական բացասական ազդեցություն կունենա նաև Իրանի տնտեսության վրա. Իրանի ներմուծման գրեթե 85%-ը անցնում է այս նեղուցով, ինչպես նաև այստեղով է անցնում Իրանից նավթի արտահանման մեծ մասը: Հետևաբար, նեղուցի փակման հեռանկարը կարող է լուրջ բացասական հետևանքներ ունենալ նաև Իրանի՝ առանց այդ էլ ծանր տնտեսական իրադրության վրա, հատկապես եթե հնարավոր լինի զսպել նավթի գների կտրուկ աճը[30]:

[29] Why the U.S. Plan to Protect Tankers in the Persian Gulf Won't Deter Iran (Jul 8, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://worldview.stratfor.com/article/why-us-plan-protect-oil-tankers-persian-gulf-wont-deter-iran-attacks-security-military (այցելվել է 08.11.2019թ.):

[30] How Iran Could Really Hurt America (And the World): Close the Strait of Hormuz, by Edward Chang (June 14, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://nationalinterest.org/blog/buzz/how-iran-could-really-hurt-america-and-world-close-strait-hormuz-62542 (այցելվել է 08.11.2019թ.):

Այսինքն՝ Իրանը կարող է իրոք փակել Հորմուզի նեղուցը միայն այն դեպքում, երբ հայտնվի անելանելի վիճակում: Ավելի հեշտ է Հորմուզի նեղուցի փակումը դարձնել շահարկման ու բանակցությունների առարկա՝ դրանից ստանալով որոշ արտաքին քաղաքական դիվիդենտներ, քան գործնականում ներքաշվել նեղուցի փակման խիստ վտանգավոր գործի մեջ: Ստացվում է, որ Հորմուզի նեղուցի փակման հեռանկարը չի բխում տարածաշրջանի պետություններից ոչ մեկի, այդ թվում՝ ԱՄՆ-ի ու Իրանի շահերից:

Ավելին, նավթի համաշխարհային գների կտրուկ աճը կարող է լուրջ բացասական ազդեցություն ունենալ համաշխարհային տնտեսության աճի տեմպի վրա: Այսինքն՝ եթե ԱՄՆ-ի գործողությունները հանգեցնեն Հորմուզի նեղուցի փակմանը, դա կհանգեցնի նաև ԱՄՆ-ի վարած քաղաքականության նկատմամբ այլ աշխարհաքաղաքական բևեռների, այդ թվում՝ ԵՄ-ի, ՉԺՀ-ի և մի շարք ասիական երկրների դժգոհությանը:

Մինչ միջազգային ուշադրությունը կենտրոնացած է Հորմուզի նեղուցի վրա, չի կարելի թերագնահատել մեկ այլ՝ Բաբ էլ Մանդեբի նեղուցի փակման հնարավոր սպառնալիքը: Որոշ փորձագետներ այս սցենարը ավելի հավանական են համարում, հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

- Բաբ էլ Մանդեբի նեղուցով օրական տեղափոխվում է շուրջ 4.8 մլն բարել նավթ (2016թ. տվյալներով)՝ հիմնականում Սաուդյան Արաբիայից, իսկ դրա փակումից Իրանի կորուստները այնքան էլ մեծ չեն լինի:
- Այս նեղուցը Իրանը կարող է արգելափակել ոչ թե ուղղակի, այլ միջնորդավորված՝ Եմենի հուսիթների միջոցով, ինչը կնվազեցնի անմիջական առճակատման վտանգը:
- Փակելով այս նեղուցը՝ Իրանը միանգամից կհարվածի տարածաշրջանում իր երկու հիմնական հակառակորդների՝ Սաուդյան Արաբիայի և Իսրայելի շահերին. Բաբ էլ Մանդեբի նեղուցով անցնող Իսրայելի առևտրի տարեկան ծավալը կազմում է շուրջ 15 մլրդ դոլար[31]:

Մերձավոր Արևելքում նեղուցների արգելափակումը կանխելու, Պարսից ծոցում անվտանգությունը երաշխավորելու նպատակով ԱՄՆ-ը կարծես վերջին շրջանում

[31] US–Iran tensions and the oil factor. Mahsa Rouhi (23rd April 2019) հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.iiss.org/blogs/survival-blog/2019/04/us-iran-tensions-oil (այցելվել է 08.11.2019թ.):

որոշակի ջանքեր է գործադրում[32]: Այս տեսանկյունից ուշագրավ էին ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաների հունիսի վերջին կատարած այցերը Մերձավոր Արևելք՝ Իրանի հարցերով ԱՄՆ հատուկ ներկայացուցիչ Բրայան Հուկի այցերը Բահրեյն, Քուվեյթ, Օման, Սաուդյան Արաբիա, ԱՄԷ, ԱՄՆ նախագահի անվտանգության հարցերով նախկին խորհրդական Ջոն Բոլթոնի այցը Իսրայել և հանդիպումները իսրայելցի և ռուս գործընկերների հետ, արտգործնախարար Մայք Պոմպեոյի այցը ԱՄԷ և Սաուդյան Արաբիա: Փորձագետների կարծիքով՝ ԱՄՆ-ը մտադիր է կոալիցիա ձևավորել, որը համապատասխան միջոցներ կտրամադրի Պարիսից ծոցում հածանավերին ուղեկցող նավատորմի ձևավորման համար[33] [34]:



[35]

Նեղուցների շուրջ ստեղծված իրավիճակը չափազանց վտանգավոր է: Անկախ նրանից, թե հակամարտող կողմերը ինչպիսի ռազմավարություն և մարտավարություն են որդեգրել, շատ հավանական է քայլերի թերհաշվարկը, որը կարող է հանգեցնել

[32] Iran Decides Its Best Defense Is Bravado. Reva Goujon (Jun 14, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://worldview.stratfor.com/article/iran-going-all-against-us-trump-nuclear-oil-tanker-hormuz (այցելվել է 08.11.2019թ.):

[33] US Wants Allies To Do More In Gulf; But They're Already There, By Paul McLeary (June 25, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://breakingdefense.com/2019/06/us-wants-allies-to-do-more-in-gulf-but-theyre-already-there/ (այցելվել է 08.11.2019թ.):

[34] Pompeo Departs for Saudi Arabia, UAE to Build Coalition Against 'State Sponsor of Terror' Iran (24.06.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://sputniknews.com/us/201906241076029397-pompeo-departs-for-saudi-arabia-uae-to-build-coalition-against-state-sponsor-of-terror-iran/ (այցելվել է 08.11.2019թ.):

[35] The Strait of Hormuz: A U.S.-Iran Maritime Flash Point. By CFR.org Editors (June 18, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.cfr.org/article/strait-hormuz-us-iran-maritime-flash-point (այցելվել է 08.11.2019թ.):

կործանարար պատերազմի: Իրավիճակը բարդացնում է տարածաշրջանում տարատեսակ ահաբեկչական կազմակերպությունների՝ առաջին հերթին Իսլամական պետության առկայությունը: Չի բացառվում, որ այդ կազմակերպությունները կարող են նեղուցներում լցանավերի վրա հարձակումներ կազմակերպել՝ սադրելով ԱՄՆ-Իրան բախում: Սա շատ տրամաբանական սցենար է, հաշվի առնելով Սիրիայում և Իրաքում ԻՊ-ի կրած պարտությունները և հաշվեհարդար տեսնելու ցանկությունը, ինչը հնարավոր կլինի տարածաշրջանում անկայունության նոր օջախներ ստեղծելու պարագայում:

2.2 Անուղղակի պատերազմ տարածաշրջանում իրանամետ և հակաիրանական ուժերի միջև՝ առանց ԱՄՆ-ի ուղղակի մասնակցության

Իրանի շուրջ ստեղծված լարվածության հետագա զարգացման մեկ այլ սցենար է անուղղակի պատերազմի բռնկումը տարածաշրջանում իրանամետ և հակաիրանական ուժերի միջև՝ առանց ԱՄՆ-ի ուղղակի մասնակցության: Այն կարող է լինել անմիջապես Իրանի և տարածաշրջանի այլ երկրների միջև բախման տեսքով, որտեղ ԱՄՆ-ն աջակցություն կտրամադրի հակաիրանական ուժերին՝ Իրան-իրաքյան պատերազմի օրինակով: Մյուս տարբերակը երրորդ երկրի (երկրների) տարածքում մի կողմից՝ Իրանի, մյուս կողմից՝ նրա հակառակորդների՝ ԱՄՆ-ի դաշնակից ուժերի միջև անուղղակի պատերազմն է:

Մերձավոր Արևելքում միջնորդավորված պատերազմները նոր երևույթներ չեն, և այդպիսիք պարբերաբար եղել են նաև Սառը պատերազմի տարիներին: Այժմ այդպիսի պատերազմներ են ընթանում Սիրիայում, Եմենում, Պաղեստինում և հակամարտության այլ թեժ օջախներում: Տարածաշրջանում Իրանի հիմնական հավատարիմ ուժերն են հուսիթները՝ Եմենում, ալևիները՝ Սիրիայում, «Հեզբոլլահը»՝ Պաղեստինում և Լիբանանում, շիա մահմեդական խմբավորումները՝ Իրաքում:

Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի նախաձեռնած պատերազմների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց արդյունքում ոչ միայն չեն թուլանում Թեհրանի դիրքերը, այլև դրանք ավելի են ամրապնդվում: Այսպես, եթե Սադամ Հուսեյնի օրոք Իրաքը Իրանի ոխերիմ թշնամին էր, այժմ ոչ ոք չի կարող թերագնահատել այդ երկրում Թեհրանի ազդեցությունը: Պատերազմների ընթացքում Իրանը էականորեն ամրապնդել է դիրքերը Սիրիայում, Լիբանանում, այժմ մեծ ազդեցություն ունի Եմենում: Սակայն իրավիճակը կարող է փոխվել, եթե Իրանի դեմ միավորվեն տարածաշրջանում վերջինիս բոլոր հակառակորդները:

Վերջին շրջանում Մերձավոր Արևելքում Իրանի հակառակորդները ակտիվորեն զինվել են, և ռազմական տեսանկյունից բավականին մեծ ներուժ են կուտակել: Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի փորձագետ Էնթոնի Քորդսմենը, 2019թ. մայիսի 30-ին հրապարակած հետազոտության մեջ անդրադառնալով Իրանի հրթիռային սպառնալիքին, նշում է, որ 2008-2015թթ. ընթացքում Իրանը գնել է ընդամենը 900 մլն դոլարի զենք: Նույն ժամանակահատվածում Իրանի հակառակորդներից Սաուդյան Արաբիան գնել է 93,5 մլրդ դոլարի, ԱՄԷ-ն՝ 25,7 մլրդ-ի, Քուվեյթը՝ 8 մլրդ-ի, Օմանը՝ 10,5 մլրդ-ի, Քաթարը՝ 23,9 մլրդ-ի, Բահրեյնը՝ 900 մլն-ի զենք: Այսինքն՝ միայն այս վեց երկրները միասին գնել են 162,5 մլրդ դոլարի զենք՝ Իրանի 900 մլն դոլարի դիմաց (181 անգամ ավելի): Ընդ որում, այստեղ ներառված չեն Իրանի այլ իրական և հնարավոր հակառակորդների՝ Իսրայելի, Իրաքի, Հորդանանի, Եգիպտոսի, ինչպես նաև տարածաշրջանում ԱՄՆ ռազմաբազաների տեխնիկական ձեռքբերումները[36]: Արդարության համար պետք է նշել, որ չնայած զենքի գնման փոքր ցուցանիշներին՝ Իրանում վերջին տարիներին էական առաջընթաց է գրանցվել զենքի սեփական արտադրության ոլորտում:



37

[36] The Iranian Missile Threat. By Anthony H. Cordesman (May 30, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.csis.org/analysis/iranian-missile-threat (այցելվել է 08.11.2019թ.):

[37] Marking Key Military Positions in a Potential U.S.-Iran Conflict (Jun 18, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://worldview.stratfor.com/article/map-military-positions-united-states-iran-conflict-perisan-gulf-strait-hormuz-middle-east (այցելվել է 08.11.2019թ.):

Չպետք է մոռանալ նաև Ադրբեջանի և Թուրքիայի ձեռքբերումները՝ հատկապես հաշվի առնելով Թուրքիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին և Իրանի նկատմամբ Ադրբեջանի տարածքային հավակնությունները: Վերջին շրջանում ԱՄՆ դիվանագիտական ջանքերը կարծես թե պայմանավորված են հենց այս իրողություններից ելնելով: Վաշինգտոնը փորձում է Մերձավոր Արևելքում հակաիրանական բլոկ ձևավորել, որը թույլ կտա անուղղակի հակազդեցություն ցուցաբերել Թեհրանի տարածաշրջանային հավակնություններին[38]:

Չնայած Սաուդյան Արաբիան և Իսրայելը կարող են ավելի շահագրգռված լինել Իրան-ԱՄՆ ուղղակի առճակատմամբ, քանի որ այս դեպքում իրանական հրթիռային հակահարվածի առաջնային թիրախում կհայտնվեն ոչ թե իրենց ենթակառուցվածքները, այլ տարածաշրջանում ամերիկյան ռազմաբազաները, սակայն փորձագետները քիչ հավանական են համարում այս փուլում՝ 2020թ. սպասվող ԱՄՆ նախահգահական ընտրություններին ընդառաջ, Իրանի հետ ուղղակի պատերազմի մեջ ներգրավվելու Վաշինգտոնի պատրաստակամությունը: Ի տարբերություն Իսրայելի և Սաուդյան Արաբիայի՝ ԱՄՆ-ի համար Իրանի միջուկային և հրթիռային ծրագրերը էկզիստենցիալ վտանգ չեն պարունակում[39]:

Ամեն դեպքում պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ տարածաշրջանում միատարր չեն ոչ Իրանի, ոչ էլ առավել ևս ԱՄՆ-ի դաշնակիցները: Քիչ չեն դեպքերը, երբ Իրանի կողմից հովանավորվող ուժերը հաճախ իրականացրել են Թեհրանի շահերին հակասող գործողություններ՝ անհարկի սրելով իրավիճակը[40]: Նույնը կարելի է ասել ԱՄՆ-ի դաշնակիցների գործողությունների մասին:

Չեն բացառվում վերջիններիս կողմից Վաշիգտոնին Իրանի դեմ պատերազի մեջ ներքաշելու փորձերը: Մյուս կողմից, ԱՄՆ-ի որոշ տարածաշրջանային դաշնակիցներ՝ Իրաք, քրդեր, Թուրքիա, Իրանի դեմ հնարավոր պատերազմի դեպքում հավանաբար

---

[38] Американцы создают "арабскую НАТО". Помешает ли им Россия (19.05.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://ria.ru/20190519/1553581668.html (այցելվել է 08.11.2019թ.):

[39] Saudi Arabia and Israel Are Pushing US to Confront Iran. Trump Shouldn't Take the Bait. Richard Sokolsky, Aaron David Miller (May 21, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://carnegieendowment.org/2019/05/21/saudi-arabia-and-israel-are-pushing-us-to-confront-iran.-trump-shouldn-t-take-bait-pub-79181 (այցելվել է 08.11.2019թ.):

[40] Iran's Network of Fighters in the Middle East Aren't Always Loyal to Iran. by Becca Wasser and Ariane M. Tabatabai (May 21, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.rand.org/blog/2019/05/irans-network-of-fighters-in-the-middle-east-arent.html (այցելվել է 08.11.2019թ.):

կգերադասեն չեզոքություն պահպանել[41]: Օրինակ՝ Իրաքի նախագահը վերջերս բացառել է Իրանի դեմ հնարավոր պատերազմի դեպքում վերջինիս հարվածելու համար իր երկրի տարածքի օգտագործումը[42]:

Իրանի և տարածաշրջանում վերջինիս հակառակորդների միջև ռազմական բախման վտանգը, ինչպես ցանկացած միջնորդավորված գործողություն, մեծ սպառնալիքներ է պարունակում: Ցանկացած պահի այն կարող է ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ բախման վերաճել: Պատահական չէ, որ Թեհրանը վերջին շրջանում փորձում է նման իրավիճակը բացառելու քայլեր ձեռնարկել: Վերջերս Իրանի արտգործնախարար Մոհամմադ Զարիֆը Պարսից ծոցի երկրներին առաջարկել էր չհարձակման պակտ ստորագրել[43]: ՄԱԿ-ի ԳԱ 74-րդ նստաշրջանի ժամանակ ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին հանդես եկավ տարածաշրջանում այսպես կոչված «Հույսի կոալիցիա» ձևավորելու նախաձեռնությամբ:

Տարածաշրջանում անվտանգության նոր համակարգ ձևավորելու գաղափարը ակտիվորեն խրախուսվում է նաև Մոսկվայի կողմից. ըստ էության, փորձագետների շրջանում կա համոզմունք, որ գաղափարը հենց Ռուսաստանն է դրել շրջանառության մեջ: Ռուս փորձագետները սա պայմանավորում են Սաուդյան Արաբիայի և Իսրայելի հետ ունեցած հարաբերությունների վերջին շրջանի դրական դինամիկայով, ինչը մեծացնում է ՌԴ-ի հեղինակությունը այդ երկրներում: Ռուսաստանի միջնորդությամբ այսպիսի փոխհամաձայնության ձեռքբերումը կարող է մեծացնել տարածաշրջանում Մոսկվայի միջնորդական դերակատարությունը[44]: Ուշագրավ է, որ ՉԺՀ-ն նույնպես կողմ է Մերձավոր Արևելքում լարվածության թուլացման և անվտանգության ավելի հուսալի համակարգերի ձևավորման գաղափարին, որի մասին ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում հայտարարեց նաև ՉԺՀ արտգործնախարարը:

---

[41] Иран-Ирак: на повестке дня добрососедство. Александр Марьясов (10.04.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ http://ru.valdaiclub.com/a/highlights/iran-irak-na-povestke-dnya-dobrososedstvo/ (այցելվել է 08.11.2019թ.):

[42] Իրաքի նախագահը բացառել է իր տարածքն Իրանին հարվածելու համար օգտագործելու հնարավորությունը (26.06.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://168.am/2019/06/26/1141190.html (այցելվել է 08.11.2019թ.):

[43] Iran repeats offer on non-aggression pact with Arab states (26,05,2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.presstv.com/Detail/2019/05/26/596951/Iran-nonaggression-pact-Arab-states-Persian-Gulf-Zarif (այցելվել է 08.11.2019թ.):

[44] Дилемма безопасности: будет ли война между США и Ираном? Хамидреза Азизи (31.05.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ http://ru.valdaiclub.com/a/highlights/dilemma-bezopasnosti/ (այցելվել է 08.11.2019թ.):

2.3 ԱՄՆ-ի կողմից Իրանի նկատմամբ թիրախային հարվածներ՝ առանց «ռեժիմի փոփոխության» մտադրության

Իրան-ԱՄՆ հակամարտության զարգացման սցենարների շարքում դիտարկվում է նաև ԱՄՆ-ի կողմից Իրանի նկատմամբ թիրախային հարվածների իրականացումը՝ առանց «ռեժիմի փոփոխության» մտադրության: Հատկանշական է, որ վերջին շրջանում ԱՄՆ նախագահը հաճախ է հանդես գալիս Իրանում «ռեժիմի փոփոխության» մտադրության բացակայության մասին հայտարարություններով[45]: Թիրախային հարվածների հարցը սկսվեց ակտիվորեն քննարկվել ամերիկյան ԱԹՍ-ի խոցման միջադեպին հաջորդող ժամանակահատվածում, երբ, ինչպես նշվեց, Թրամփը նույնիսկ հայտարարեց Իրանին երեք ուղղությամբ թիրախային հարվածներ հասցնելու հրամանի, ապա այն չեղարկելու մասին:

Ենթադրվում է, որ ԱՄՆ-ի ՌՕ և ՌԾ ուժերի կողմից Իրանում ընտրված թիրախների խոցումը հնարավորություն կտա առանց լայնամասշտաբ պատերազմի՝ Իրանի հատուկ ռազմական օբյեկտներին լուրջ հարված հասցնել: «Սթարֆորի» փորձագետների կարծիքով ԱՄՆ սահմանափակ հարվածների ենթադրյալ թիրախներ կարող են դառնալ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի այն հենակետերը, որոնք իրականացրել են ամերիկյան ԱԹՍ-ի խոցումը, Հորմուզի նեղուցում իրանական նավատորմի այն օբյեկտները, որոնք ըստ ամերիկյան հետախուզության կարող էին մասնակցություն ունենալ լցանավերի խոցմանը, ինչպես նաև Իրանի ծովային ռազմաբազնաները: ԱՄՆ-ը կարող է նաև թիրախավորել իրանական ԱԹՍ-երը և ինքնաթիռները, ինչպես նաև ԻՀՊԿ-ի հրամանատարական շտաբները: Որպես հավանական թիրախ դիտարկվում են նաև Իրանի միջուկային ենթակառուցվածքները[46]:

ԱՄՆ կողմից թիրախային հարվածները, անկասկած, Իրանի կողմից համարժեք արձագանք կստանան: Իրանի ամենահավանական պատասխանը կարող է լինել տարածաշրջանում ԱՄՆ-ի ռազմաբազաների և ԱՄՆ-ի դաշնակիցների կարևոր օբյեկտների ռմբակոծումը: Ընդ որում, շատ մեծ է հավանականությունը, որ դա, այնուամենայնիվ, կարող է հանգեցնել լայնամասշտաբ պատերազմի: ԱՄՆ-ի ուղղակի

---

[45] Trump says he is not seeking ‘regime change’ in Iran. By Michael Kranish (May 27, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.washingtonpost.com/world/national-security/trump-says-he-is-not-seeking-regime-change-in-iran/2019/05/27/94d3053a-808d-11e9-933d-7501070ee669_story.html?utm_term=.aa4be5f1d2de (այցելվել է 08.11.2019թ.):

[46] Iran, U.S.: Iran's Downing of a U.S. Drone Invites a Military Response (Jun 20, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://worldview.stratfor.com/article/iran-shoots-down-us-drone-us-military-strike-iran (այցելվել է 08.11.2019թ.):

հրթիռակոծմանը դժվար թե Իրանը միջնորդավորված պատասխան տա, ինչը ենթադրում է, որ դա կհանգեցնի ԱՄՆ-Իրան անմիջական առճակատման: ԱԹՍ-ի խոցման միջադեպից հետո իրանցի պաշտոնյաների հավաստմամաբ Թեհրանը ԱՄՆ-ին զգուշացրել է, որ Իրանի նկատմամբ ցանկացած տիպի ռազմական օպերացիա դիտարկելու են որպես պատերազմի սկիզբ[47]:

Դատելով Թեհրանի հրթիռային պոտենցիալից, կարող ենք ենթադրել, որ ԱՄՆ հարձակման անմիջական սպառնալիքի ներքո Իրանը կգերադասի առաջինը հարվածել տարածաշրջանում ԱՄՆ ռազմական օբյեկտներին և դաշնակիցներին: Իրանում կարող են ենթադրել, որ կանգնած են հրթիռային համակարգերի «օգտագործիր կամ կկորցնես» սպառնալիքի առջև, իսկ այդ դեպքում առճակատումից խուսափել չի ստացվի[48]:

Տեսակետները, որ Իրանին սահմանափակ, թիրախային հարվածներ հասցնելով հնարավոր կլինի այնտեղ իշխանափոխություն հրահրել, ամերիկացի փորձագետները քիչ հավանական են համարում: Միջուկային ենթակառուցվածքներին հարվածներ հասցնելն իր հերթին միայն ժամանակավորապես կկասեցնի Իրանի միջուկային ծրագիրը: Այսինքն միայն թիրախային հարվածները ԱՄՆ-ին թույլ չեն տա հասնել իր առջև դրված նպատակներին, փոխարենը զգալիորեն կմեծացնեն իրավիճակի էսկալացիայի և լայնամասշտաբ պատերազմի հնարավորությունները[49]: Թերևս սրանով էր պայմանավորված ԱԹՍ-ի խոցման դեպքից հետո Իրանին հարվածելու որոշման չեղարկումը:

2.4 Պատահականության հետևանքով պատերազմի բռնկում՝ հնարավոր ապոկալիպտիկ հետևանքներով

Իրանի շուրջ ճգնաժամի հետագա խորացման տեսանկյունից ավելի հավանական է դառնում պատահականության հետևանքով պատերազմի բռնկման

---

[47] Любую военную операцию США против себя Иран расценит как начало войны (7 июля 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://eadaily.com/ru/news/2019/07/07/lyubuyu-voennuyu-operaciyu-ssha-protiv-sebya-iran-rascenit-kak-nachalo-voyny (այցելվել է 08.11.2019թ.):

[48] Marking Key Military Positions in a Potential U.S.-Iran Conflict (Jun 18, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://worldview.stratfor.com/article/map-military-positions-united-states-iran-conflict-perisan-gulf-strait-hormuz-middle-east (այցելվել է 08.11.2019թ.):

[49] Op-Ed: There's no compelling reason for the U.S. to go to war with Iran — yet. By Aaron David Miller and Richard Sokolsky (May 19, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.latimes.com/opinion/op-ed/la-oe-miller-sokolsky-iran-trump-war-attack-military-forces-20190519-story.html (այցելվել է 08.11.2019թ.):

հեռանկարը: Այս վարկածը դիտարկելիս փորձագետները հաշվի են առնում մի շարք իրողություններ.

- Երկու կողմերի միջև բացակայում է ուղիղ հաղորդակցությունը. դրա մասին են խոսում ամերիկացի և իրանցի պաշտոնյաների, այդ թվում՝ արտգործնախարարների հանդիպումների գրեթե բացակայութունը: Կողմերից մեկի սխալ քայլը կամ մյուս կողմից դրա սխալ ընկալումը կարող է հանգեցնել իրադրության էսկալացիայի, որը կանխելու համար դիվանագիտական ուղիները բացակայում են[50]: ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում Ֆրանսիայի նախագահ Մակրոնի կողմից Թրամփի և Ռոհանիի միջև հանդիպում կազմակերպելու փորձի տապալումը ցույց տվեց, որ զգալիորեն սահմանափակվել են նաև միջնորդավորված բանակցությունների հնարավորությունները:

- Տարածաշրջանում Իրանի և իր հակառակորդների ուժերը ասիմետրիկ են բաշխված: Ռազմական առճակատման ռիսկի աճը կարող է Իրանին ստիպել առաջինը հարված հասցնել, քանի որ ԱՄՆ-ի և դաշնակիցների գերակայող դիրքերը հնարավորություն կտան այդ հարվածի ձգձգման դեպքում զգալիորեն նվազեցնել Իրանի հարվածային պոտենցիալը: Որքան Թեհրանն ուշացնի հրթիռների արձակումը, այնքան ավելի մեծ կլինի հավանականությունը, որ ԱՄՆ զինված ուժերը դրանք կոչնչացնեն[51]:

- ԱՄՆ-Իրան ռազմական բախման հարցում կարող են շահագրգռված լինել տարածաշրջանային այլ դերակատարներ, այդ թվում՝ Իսրայելն ու Սաուդյան Արաբիան: Այս երկրները կարող են իրենց գործողություններով հրահրել ԱՄՆ-ի և Իրանի միջև ռազմական բախում, անգամ եթե այդ բախումը երկու կողմերի համար անցանկալի լինի:

- Տարածաշրջանում առկա ահաբեկչական կազմակերպությունները նույնպես կարող են շահագրգռված լինել իրավիճակի սրմամբ, ուստի նրանց սադրիչ գործողությունները ևս կարող են հանգեցնել ԱՄՆ-Իրան լայնամասշտաբ պատերազմի:

- Իրանում կարող են ԱՄՆ-ի դեմ պատերազմի սպառնալիքը դիտարկել որպես ԱՄՆ նախագահական ընտրություններից առաջ Թրամփի վրա ճնշում գործադրելու

[50] The Factors That Could Push the U.S. and Iran to War (Jun 12, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://worldview.stratfor.com/article/factors-could-push-us-and-iran-war (այցելվել է 08.11.2019թ.):
[51] Marking Key Military Positions in a Potential U.S.-Iran Conflict (Jun 18, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://worldview.stratfor.com/article/map-military-positions-united-states-iran-conflict-perisan-gulf-strait-hormuz-middle-east (այցելվել է 08.11.2019թ.):

գործիք: Այստեղ Իրանի կողմից թերհաշվարկը կմեծացնի պատերազմի հավանականությունը[52]:

- ԱՄՆ Նախագահի աշխատակազմում նշանակալի դերակատարություն ունեն Իրանի նկատմամբ կոշտ դիրքորոշում ունեցող գործիչները: Դրանց թվում հատկապես մեծ ազդեցություն ունի արտգործնախարար Մայք Պոմպեոյի կարծիքը: Թեև վերջերս պաշտոնից հեռացավ հակաիրանական տրամադրություններով ամենահայտնի գործիչներից մեկը՝ Թրամփի անվտանգության հարցերով նախկին խորհրդական Ջոն Բոլթոնը, այնուամենայնիվ պետական ապարատում ռազմատենչ դիրքորոշում ունեցող այլ գործիչների համառ ջանքերը նույնպես կարող են հանգեցնել Իրանի դեմ անցանկալի պատերազմի բռնկման:

Իրավիճակը ավելի է բարդացնում Պարսից ծոցում պարբերաբար ամերիկյան ավիակիրների հայտնվելը, տարածաշրջանում ամերիկյան նոր զորքերի տեղակայումը: Եթե պատահականության շնորհիվ պատերազմ սկսվի, դրա հետագա ընթացքը կասեցնելն այլևս չափազանց բարդ կլինի[53] [54]: Այն կարող է ընդգրկել ողջ տարածաշրջանը, այդ թվում՝ սպառնալով Հարավային Կովկասի անվտանգությանը:

2.5 Ամերիկյան ուղղակի ներխուժում՝ Իրանում «ռեժիմի փոփոխության» նպատակով

Որքան էլ պաշտոնական Վաշինգտոնը հավաստիացնի Իրանում «ռեժիմի փոփոխության» նպատակ չունենալու մասին, ակնհայտ է, որ ԱՄՆ-ի վերջնանպատակը հենց Իրանում իշխանափոխությունն ու իր համար ավելի ընդունելի քաղաքական էլիտայի ձևավորումն է: Այս տեսակետը կիսում է Թրամփի աշխատակազմի երկու առանցքային պաշտոնյաներից մեկը՝ պետքարտուղար Մայք Պոմպեոն[55]: Ստեղծված իրավիճակը մասնագետներին թույլ է տալիս ենթադրել, որ Իրանի շուրջ զարգացումների վերջնարդյունքը լինելու է ամերիկյան ուղղակի

---

[52] Escalating U.S.-Iran Tensions: What's Next? By Philip H. Gordon, CFR Expert (May 17, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.cfr.org/article/escalating-us-iran-tensions-whats-next (այցելվել է 08.11.2019թ.):

[53] Yes, the U.S. Could Be Drawn Into Yet Another Big War. by Michael J. Mazarr (April 19, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.rand.org/blog/2019/04/yes-the-us-could-be-drawn-into-yet-another-big-war.html (այցելվել է 08.11.2019թ.):

[54] Taking the U.S. and Iran Off Collision Course (15 May 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/iran/taking-us-and-iran-collision-course (այցելվել է 08.11.2019թ.):

[55] A Path to War With Iran How Washington's Escalation Could Lead to Unintended Catastrophe, By Philip H. Gordon (May, 20, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.foreignaffairs.com/articles/iran/2019-05-20/path-war-iran (այցելվել է 08.11.2019թ.):

ներխուժումը: Այլ հարց է, որ մի շարք հարցեր կան դրա ժամկետների, հետևանքների և նպատակահարմարության առումով:

Ամերիկյան ուղղակի ներխուժումը Իրան՝ ցամաքային զորքերի ներգրավմամբ, կարող է դառնալ ԱՄՆ պատմության մեջ ամենածախսատար պատերազմներից մեկը: Եթե Իրան-իրաքյան պատերազմի վրա, ըստ մի շարք հաշվարկների, ԱՄՆ-ը ծախսել է ավելի քան 2 տրիլիոն դոլար, ապա Իրանի դեմ պատերազմը անհամեմատ ավելի ծախսատար կլինի՝ հաշվի առնելով ինչպես Իրանի տարածքի ու բնակչության մեծությունը, պետական կառուցվածքը, գաղափարախոսությունը, ռազմական ու տնտեսական պոտենցիալը, այնպես էլ տարածաշրջանում Իրանի դիրքերի ռազմավարական ու մարտավարական առանձնահատկությունները[56]:

ԱՄՆ-ի կողմից ներխուժումը Իրան կհանդիպի ինչպես ներքին հակազդեցության՝ թե՛ դեմոկրատների, թե՛ Թրամփի որոշ աջակիցների կողմից, այնպես էլ հավանաբար աջակցություն չի ստանա ոչ ՄԱԿ-ի, ոչ ԵՄ-ի, ոչ էլ առհասարակ միջազգային հանրության կողմից: Եթե Իրան-իրաքյան պատերազմի պարագայում ԱՄՆ-ը ստիպված էր տարածաշրջան ուղարկել շուրջ 150 հազար զինվորական, ապա Իրանի դեպքում ամերիկացի փորձագետների կարծիքով կպահանջվի առնվազն 300 հազար զինվոր: Հաշվի առնելով Իրանի էթնիկ և կրոնական բազմազանությունը, այդ երկրում տևական պատերազմը կարող է քայքայիչ հետևանք ունենալ տարածաշրջանի համար, մինչդեռ Իրաքի, Սիրիայի և այլ երկրների փորձը հուշում է, որ ԱՄՆ-ը տասնամյակներ շարունակ ստիպված կլինի ներգրավված լինել հակամարտության մեջ:

Պատերազմը կարող է հող նախապատրաստել Իրանում ԻՊ ահաբեկչական կազմակերպության հաստատման համար, ինչը իրական սպառնալիք կդառնա Իրանի հարևանների համար[57]: Ինչ վերաբերում է «ռեժիմի փոփոխության» հեռանկարին, ապա չի բացառվում, որ ԱՄՆ-ի ներխուժումը հանգեցնի Իրանում ավելի արմատական, հակաամերիկյան իշխանության հաստատմանը[58]:

---

[56] How a U.S.-Iran War Could Get Nasty, by David Axe (June 17, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://nationalinterest.org/blog/buzz/4-million-barrels-oil-halted-how-us-iran-war-could-get-nasty-63112 (այցելվել է 08.11.2019թ.):

[57] Attacking Iran Would Unleash Chaos on the Middle East, by Robert Gaines Scott Horton (June 15, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://nationalinterest.org/feature/attacking-iran-would-unleash-chaos-middle-east-62582 (այցելվել է 08.11.2019թ.):

[58] Op-Ed: There's no compelling reason for the U.S. to go to war with Iran — yet. By Aaron David Miller and Richard Sokolsky (May 19, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.latimes.com/opinion/op-

Չանդրադառնալով ամերիկյան ուղղակի ներխուժման հետ կապված ապոկալիպտիկ սցենարներին՝ կարող ենք միայն նշել, որ Իրանի ապակայունացումը տարածաշրջանի համար չի ունենա այն արդյունքը, ինչ Իրաքի, Սիրիայի, Եմենի և համանման ճակատագրով այլ երկրների դեպքում էր: Այն կարող է զինված գործողություններում ներքաշել տարբեր շահեր հետապնդող մեծաթիվ պետությունների, ինչպես նաև տարածվել այլ տարածաշրջաններում: Հետևաբար, հարկավոր է հաշվի առնել նաև այս սցենարը ու դրանից բխող ռիսկերը: Թեև այս փուլում այն քիչ հավանական է թվում, սակայն եթե ԱՄՆ արտաքին քաղաքական երկարաժամկետ ռազմավարության տեսանկյունից դիտարկենք, դրա հավանականությունը մեծ է:

2.6 Իրավիճակի շարունակական լարում մինչև 2020 թվականին սպասվող ԱՄՆ նախագահական ընտրությունները, այնուհետև բանակցությունների վերսկսում:

Իրանի շուրջ ստեղծված իրավիճակի լավատեսական սցենարների հեղինակները հավանական են համարում, որ ԱՄՆ-Իրան հարաբերություններում լարվածությունը աստիճանաբար կշարունակի աճել մինչև 2020թ. ԱՄՆ նախագահական ընտրությունները, որից հետո, կախված դրա արդյունքներից, հնարավոր կլինի լուծումներ գտնել: Այս տեսակետի հեղինակները հաշվի են առնում այն հանգամանքը, որ նախքան նախագահական ընտրությունները, Թրամփը դժվար թե ցանկանա ներքաշվել նոր պատերազմի մեջ, ինչը զգալիորեն կնվազեցնի նրա հաղթելու հավանականությունը:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ Թեհրանը, ԱՄՆ քայլերին ի պատասխան կոշտացնելով հռետորաբանությունը, ձգտում է մեծացնել ճնշումը Թրամփի վրա և թուլացնել նրա դիրքերը նախագահական ընտրություններից առաջ: Ի վերջո, եթե այս քաղաքականության արդյունքում հաջողվի խոչընդոտել Թրամփի հաղթանակը, ապա ԱՄՆ հաջորդ իշխանությունները կարող են Իրանի նկատմամբ այլ քաղաքականություն որդեգրել: Իսկ եթե Թրամփը շարունակի պաշտոնավարել նաև երկրորդ ժամկետում, Իրանը կարող է զիջումների գնալ և համաձայնություն տալ նոր բանակցություններ սկսելուն[59]:

Այս սցենարը ենթադրում է, որ Իրանի նկատմամբ պատժամիջոցները շարունակելու են խստացվել, ուստի Թեհրանը պետք է իրավիճակից դուրս գալու ելքեր

---

ed/la-oe-miller-sokolsky-iran-trump-war-attack-military-forces-20190519-story.html (այցելվել է 08.11.2019թ.):

[59] Будет ли Иран играть по правилам США? Цви Маген (04.06.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ http://ru.valdaiclub.com/a/highlights/iran-pravila-ssha/ (այցելվել է 08.11.2019թ.):

փնտրի: Միաժամանակ, ամերիկյան իշխանությունները հավանաբար կշարունակեն Իրանի նկատմամբ «մաքսիմալ ճնշման» քաղաքականությունը, պատժամիջոցները պարտադրելով հնարավորինս մեծաթիվ երկրների, այդ թվում՝ Իրանի հարևաններին:

3. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Իրանի շուրջ իրադարձությունների զարգացման բոլոր սցենարները տարածաշրջանի համար պարունակում են որոշակի ռիսկեր: Այդ սցենարներից յուրաքանչյուրի իրականացումը ենթադրում է տարածաշրջանում սեփական շահերը հետապնդող դերակատարների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին և անվտանգային քաղաքականության հարմարեցում ստեղծված իրողություններին: Հետևաբար կարևոր է, թե կախված այս կամ այն սցենարի զարգացումից, ինչպես իրենց կդրսևորեն այդ դերակատարները, և դա ինչ ազդեցություն կունենա Հայաստանի վրա:

3.1 Ռուսաստանի Դաշնություն

Վերջին շրջանում Իրանը Մերձավոր Արևելքում դարձել է ՌԴ-ի կարևոր գործընկերներից մեկը, և այդ գործընկերությունը լավագույնս դրսևորվում է Սիրիայում ընթացող պատերազմում երկու երկրների համագործակցությամբ: Թեև երկկողմ տնտեսական հարաբերությունները ոչ այնքան բարձր մակարդակում են գտնվում՝ 2018թ. Ռուսաստանի և Իրանի միջև առևտրի շրջանառությունը կազմել է ընդամենը 1.7 մլրդ դոլար՝ ՌԴ արտաքին առևտրի 1%-ից էլ պակաս: Ընդհանուր առմամբ՝ երկու երկրների տնտեսությունները դժվար է փոխլրացնող համարել, երկուսն էլ արտահանում են հիմնականում էներգակիրներ, ներմուծում՝ բարձր տեխնոլոգիական արտադրանք[60]:

Սակայն այս ուղղությամբ ևս որոշակի քայլեր են իրականացվում՝ «Հյուսիս-Հարավ» ենթակառուցվածքային ծրագիրը, Իրան-ԵԱՏՄ ազատ առևտրի համաձայնագիրը, համագործակցության խորացումը էներգետիկ ոլորտում և այլն: Չնայած դրան՝ փորձագետների գնահատմամբ, ռուս-իրանական համագործակցությունը այս փուլում ոչ թե ռազմավարական, այլ մարտավարական բնույթ է կրում և կապված է զուտ տարածաշրջանում ռազմաքաղաքական զարգացումների հետ: Ռուսաստանը ձգտում է վերականգնել իր երբեմնի

[60] Стратегическое недоверие. Почему у России и Ирана не получается стать союзниками. Никита Смагин (4.06.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://carnegie.ru/commentary/79251 (այցելվել է 08.11.2019թ.):

ազդեցությունը Մերձավոր Արևելքում, և այդ տեսանկյունից շահագրգռված չէ տարածաշրջանում այս կամ այն ուժի, այդ թվում՝ Իրանի դիրքերի չափից ավելի ամրապնդմամբ:

Միևնույն ժամանակ ընդհանուր մարտահրավերները նաև երկու երկրների միջև համագործակցության բնական անհրաժեշտություն են առաջացնում: Այդպիսի մարտահրավերներից են նաև ամերիկյան պատժամիջոցները և տարածաշրջանում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդումը: Ընդհանուր առմամբ՝ Ռուսաստանը ավելի շատ շահագրգռված է Իրանում կայունության պահպանմամբ, որը տարածաշրջանում ԱՄՆ ազդեցությունը զսպող գործոն է, միաժամանակ Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության համար մանևրելու լավ հնարավորություն է ստեղծում:

Ինչ վերաբերում է Իրանի նկատմամբ ռազմական գործողություններին, Ռուսաստանը դժվար թե ուղղակիորեն ներքաշվի այդ հնարավոր պատերազմի մեջ, թեև հավանաբար անուղղակի աջակցություն կցուցաբերի Իրանին և հակաամերիկյան այլ ուժերին: Իրանի ապակայունացումը, հատկապես այնտեղ ահաբեկչական կազմակերպությունների ակտիվացումը մեծ վտանգներ կստեղծի ՌԴ-ի հարավային սահմանների համար: Այդ վտանգներին դիմակայելու համար Մոսկվան կփորձի ամրապնդել իր դիրքերը Հարավային Կովկասում, այդ թվում՝ Հայաստանում և Ադրբեջանում:

Իրանի շուրջ ստեղծված իրավիճակում ՌԴ-ի պաշտոնական դիրքորոշման տեսանկյունից ուշագրավ է հուլիսի 23-ին ՌԴ ԱԳՆ-ի կողմից «Պարսից ծոցի տարածաշրջանում կոլեկտիվ անվտանգության հայեցակարգի» հրապարակումը: Մասնավորապես, Ռուսաստանն առաջարկում է ԵԱՀԿ-ի օրինակով՝ Մերձավոր Արևելքում ստեղծել անվտանգության համակարգ՝ Պարսից ծոցի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ՊԾԱՀԿ): Ըստ այս հայեցակարգի՝ տարածաշրջանում նման կառույցի ստեղծման հիմքում պետք է ընկած լինեն բոլոր դերակատարների շահերի նկատմամբ փոխադարձ հարգանքն ու առկա հակամարտությունների կարգավորումը, հակաահաբեկչական պայքարում ջանքերի համատեղումն ու առկա խնդիրների դիվանագիտական ուղիների փնտրտուքը[61]:

Ռուսական կողմի այս գաղափարը նոր չէ, այն շրջանառության մեջ է դրվել դեռևս 90-ականներին, վերանայվել է 2004-2007թթ., և այժմ դրա ավելի արդիականացված

[61] Российская Концепция коллективной безопасности в зоне Персидского залива (23-07-2019), հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.mid.ru/ru/foreign_policy/international_safety/conflicts/-/asset_publisher/xIEMTQ3OvzcA/content/id/3733575/pop_up?_101_INSTANCE_xIEMTQ3%E2%80%A6 (այցելվել է 08.11.2019թ.):

տարբերակը ներկայացվում է տարածաշրջանում իրավիճակի աննախադեպ սրման համատեքստում: Թեև այս գաղափարի իրականացումը կարճաժամկետ հեռանկարում քիչ հավանական է թվում, սակայն կախված նրանից, թե այս ուղղությամբ Մոսկվան ինչ հաջողությունների կհասնի, հնարավոր կլինի հասկանալ, թե որքանով են վերջին տարիներին ամրապնդվել ՌԴ-ի դիրքերը Մերձավոր Արևելքում: Ռուս փորձագետների գնահատմամբ՝ հոկտեմբերին տեղի ունեցած ՌԴ նախագահ Պուտինի այցերը Սաուդյան Արաբիա և ԱՄԷ պետք է դիտարկել նաև վերոհիշյալ իրողությունների համատեքստում:

Ուշագրավ է, որ Պարսից ծոցի տարածաշրջանում կոլեկտիվ անվտանգության նոր համակարգի ձևավորման գաղափարը ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հնչեցրեց նաև ՄԱԿ-ի ԳԱ 74-րդ նստաշրջանի ժամանակ ունեցած իր ելույթի ժամանակ: Ըստ էության՝ ռուսական առաջարկը ընկալելի է նաև իրանական կողմի համար, որը տարածաշրջանի երկրներին առաջարկել է միավորվել այսպես կոչված «Հույսի կոալիցիայի» շրջանակներում և ձևավորել անվտանգության նոր համակարգ՝ ազատվելով տարածաշրջանում ԱՄՆ ազդեցությունից: Ուշագրավ է, որ Ծոցի երկրների շրջանում անվտանգության նոր մեխանիզմների հաստատման գաղափարը ընդունելի է նաև ՉԺՀ-ի համար, որի մասին ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում ունեցած ելույթի ժամանակ նշեց նաև այդ երկրի արտգործնախարար Վան Ին:

3.2 Ադրբեջան, Թուրքիա, Վրաստան

Իրանի շուրջ ճգնաժամի զարգացման ռազմական սցենարները հավանաբար անուղղակի ազդեցություն կունենան նաև մեր հարևանների վարքագծի վրա: Կախված Իրանի դեմ ռազմական գործողություններին ԱՄՆ-ի ուղղակի մասնակցության մակարդակից, Վրաստանն ու Թուրքիան կարող են դառնալ հյուսիսային ուղղությամբ ԱՄՆ-ի կարևոր հենակետերը: ԱՄՆ-ը կփորձի Վրաստան-Թուրքիա-Ադրբեջան առանցքին հակաիրանական ուղղվածություն տալ՝ հնարավորության դեպքում իր դիրքերն ամրապնդելով նաև Հայաստանում: Սա կհանգեցնի Հարավային Կովկասում ԱՄՆ-ՌԴ նոր մրցակցության:

Իրանի դեմ թե՛ լայնամասշտաբ պատերազմի, թե՛ մեկուսացման քաղաքականության խստացման պարագայում Թուրքիայի ներկայիս կարգավիճակը դժվար թե բավարարի Վաշինգտոնին: Էրդողանի համագործակցությունը Թեհրանի և Մոսկվայի հետ, այդ թվում՝ ռազմատեխնիկական ոլորտում, ԱՄՆ-ի համար կարող է որոշակի խաչընդոտներ ստեղծել, հետևաբար չեն բացառվում Թուրքիայում իշխանափոխություն կազմակերպելու փորձերը: Այս հարցում կարող է որոշակի

դերակատարություն ունենալ նաև Սիրիայի հյուսիսում ստեղծված իրավիճակը և այնտեղ Թուրքիայի վարքագիծը: Էրդողանից ազատվելու ամերիկյան մտադրությունների հարցում կարող է էական նշանակություն ունենալ նաև Թուրքիայի ընտրազանգվածի շրջանակներում վերջինիս դիրքերի թուլացումը՝ մասնավորապես Ստամբուլի ընտրություններում Էրդողանի պաշպանած թեկնածուի պարտությունը. Էրդողանը ինքն է ժամանակին հայտարարել, թե «ով հաղթի Ստամբուլում, կհաղթի ողջ Թուրքիայում»:

Ինչ վերաբերում է Անդրկովկասի պետություններին, ապա իրավիճակի էսկալացիայի դեպքում նրանք հավանաբար ստիպված կլինեն աշխարհաքաղաքական ընտրություն կատարել: Կախված իրադարձությունների զարգացմնան վերոհիշյալ սցենարներից՝ Ադրբեջանը կարող է փորձել կյանքի կոչել իր ծավալապաշտական ծրագրերը՝ ընդ որում թե՛ արցախյան, թե՛ իրանական ուղղությամբ:

4. ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

Արդեն նշվեց, որ Իրանի շուրջ լարվածության աճը իր ազդեցությունը կունենա նաև Հարավային Կովկասի պետությունների, այդ թվում՝ Ադրբեջանի արտաքին քաղաքականության վրա: Իրավիճակի զարգացման տարբեր սցենարներից կախված՝ Ադրբեջանը կարող է որոշակի քայլեր ձեռնարկել արցախյան ուղղությամբ: Բացի այդ, մեր տարածաշրջանի, այդ թվում՝ այստեղ շարունակվող հակամարտությունների նկատմամբ կմեծանա նաև տարածաշրջանային և գլոբալ ուժային կենտրոնների հետաքրքրությունը:

Գաղտնիք չէ, որ Իրանը դեռևս 90-ական թվականներից արցախյան հարցում կառուցողական դիրքորոշում է ցուցաբերել, ինչպես նաև շահագրգռված է եղել Արցախում կայունության, ստատուս-քվոյի և հրադադարի պահպանման հարցերում: Թեհրանի նման քաղաքականությունը պայմանավորված է Ադրբեջանի հետ ունեցած տարածքային հակասություններով, այդ երկրում Իսրայելի ազդեցությամբ, ինչպես նաև ակտիվ ռազմական գործողությունների բռնկման դեպքում Հարավային Կովկասում և Իրանի սահմաններին կից տարածաշրջանային մեծ հավակնություններ ունեցող երկրների՝ ՌԴ-ի և Թուրքիայի դիրքերի ամրապնդման մտավախությամբ: Սակայն Իրանին ամենից շատ մտահոգել է Արցախում, այդ թվում՝ իր սահմաններին

կից միջազգային խաղաղապահ ուժերի տեղակայման վտանգը՝ ԱՄՆ-ի ենթադրյալ մասնակցությամբ:

Փորձը ցույց է տալիս, որ տարածաշրջանում միջազգային իրադրության ապակայունացումը Ադրբեջանը հաճախ օգտագործում է արցախյան ռազմաճակատում լարվածության մեծացման և ռազմական գործողությունների վերսկսման նպատակով: Այդպես է եղել ռուս-վրացական պատերազմի ժամանակ, այդպես էր ռուս-թուրքական հարաբերություններում լարվածության ժամանակ՝ որը հանգեցրեց Ապրիլյան պատերազմին, և հավանաբար այդպես կլինի Իրանում իրավիճակի ապակայունացման դեպքում: Իրանում լարվածության աճը կարող է վատթարացնել տարածաշրջանում Հայաստանի առանց այն էլ բարդ իրադրությունը, և սա նույնպես Ադրբեջանին Արցախյան հարցում ճնշումը ուժեղացնելու առիթ կտա:

Հայաստանի համար առանձին մտահոգության առարկա կարող է դառնալ ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին տրամադրվող ռազմական օժանդակության կտրուկ աճը. եթե 2017թ. օգնության չափը կազմել է 2 մլն ԱՄՆ դոլար, ապա 2018-2019թթ. համար ԱՄՆ-ի ռազմական գերատեսչության և Պետդեպարտամենտի կողմից ռազմական և իրավական ոլորտներում Ադրբեջանին հատկացված ֆինանսական օգնությունը կազմել է ավելի քան 102,5 մլն դոլար: Հայաստանին 2018-ին տրամադրվել է 4,172 մլն դոլար, իսկ 2019 և 2020 թվականների համար նախատեսված է համապատասխանաբար 2,8 և 2,1 մլն դոլար[62]: Ուշագրավ է, որ վերջերս տեղեկատվություն տարածվեց, ըստ որի՝ ԱՄՆ կառավարությունը մտադիր է դադարեցնել Արցախին տրամադրվող ֆինանսական աջակցությունը[63]: Փորձագետների համոզմամբ՝ Ադրբեջանի նկատմամբ Միացյալ Նահանգների հետաքրքրության այսպիսի կտրուկ աճը պայմանավորված է Իրանի շուրջ զարգացումներով և այդ համատեքստում Վաշինգտոնի համար Ադրբեջանի ռազմավարական նշանակության ավելացմամբ:

Ադրբեջանի դիրքերի ամրապնդման տեսանկյունից լրացուցիչ ազդեցություն կարող է ունենալ Իրանի շուրջ իրադարձությունների զարգացման արդյունքում նավթի համաշխարհային գների հնարավոր կտրուկ աճը: Նավթից ստացվող հավելյալ

---

[62] ԱՄՆ-ի օգնությունն Ադրբեջանին ապրիլյան ագրեսիայի ժամանակ օգտագործվել է արցախի դեմ. վերջին տվյալները (23.07.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://golosarmenii.am/am/article/84546/amn-i-ognvothyvonn-adrbyedjanin-aprilyan-agryesiayi-jamanak-ogtagvortsvyel-e-artsakhi-dyem--vyerdjin-tvyalnyere (այցելվել է 08.11.2019թ.):

[63] ԱՄՆ կառավարությունը մտադիր է դադարեցնել Արցախին տրամադրվող ֆինանսական աջակցությունը. Հայ դատի գրասենյակն արշավ է սկսել (31.07.19), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.tert.am/am/news/2019/07/31/artsakh/3061250 (այցելվել է 08.11.2019թ.):

եկամուտները Բաքուն կարող է ուղղել արցախյան հարցում Հայաստանի նկատմամբ ճնշումը մեծացնելու ուղղությամբ, ընդ որում՝ դրանք օգտագործելով ոչ միայն ռազմական տեսանկյունից, այլև բանակցային գործընթացում և քարոզչական դաշտում:

Ադրբեջանը չի թաքցնում ստեղծված իրավիճակից օգտվելու իր մտադրությունների մասին՝ փորձելով մեծացնել ճնշումը: Մայիսին Բրյուսելում հայ լրագրողների հետ հարցազրույցի ժամանակ Ադրբեջանի արտգործնախարար Մամեդյարովը հայտարարել էր, թե «Հայաստանի սահմանները փակ են 4-ից 2 հարևանների հետ, և շուտով կփակվեն նաև 3-րդի հետ»՝ հավանաբար ակնարկելով հայ-իրանական սահմանը[64]: Ակնհայտ է, որ Մամեդյարովի այս սադրիչ հայտարարությունը Հայաստանի նկատմամբ ճնշումը մեծացնելու, բանակցությունների ժամանակ Ադրբեջանի դիրքերն ամրապնդելու նպատակ է հետապնդում. սա, միաժամանակ, ցույց է տալիս, որ Բաքվում մեծ ոգևորությամբ են դիտարկում Իրանի շուրջ ճգնաժամի խորացման և հայ-իրանական սահմանի փակման հեռանկարները:

Որքան էլ Մամեդյարովի հայտարարությունը տրամաբանությունից դուրս թվա, այնուամենայնիվ այդպիսի ենթադրությունների համար հիմքեր են ստեղծել առաջին հերթին ՀՀ ներկայիս իշխանությունների գործողություններն ու հայտարարությունները: Նախորդ տարվա աշնանը ԱՄՆ նախագահի անվտանգության հարցերով նախկին խորհրդական Ջոն Բոլթոնի այցը Հայաստան, այստեղ հնչեցված հայտարարությունները, այդ թվում՝ պատմական կաղապարներից ազատվելու, Իրանի հետ սահմանների մասին[65], նման ենթադրությունների համար լավ հիմքեր են ստեղծում: Հատկանշական է, որ Հայաստանի իշխանությունները այս հայտարարություններին համարժեք պատասխան չտվեցին, ավելին՝ ԱԺ-ում իր ելույթի ժամանակ վարչապետը Իրանի հետ սահմանի հարցը պայմանավորեց աշխարհաքաղաքական զարգացումներով և ԱՄՆ-ի հետ հարաբերություններով[66]:

Մտահոգության պատճառ են հանդիսանում նաև արցախյան բանակցային գործընթացում վերջին շրջանի զարգացումները: Վերջին շրջանում

---

[64] Мамедъяров – армянским журналистам: «Что получили армяне за 30 лет войны с Азербайджаном?» (15 мая 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://haqqin.az/news/150345 (այցելվել է 08.11.2019թ.):
[65] Ջոն Բոլթոնի հարցազրույցը «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությանը (26.10.2018), հասանելի է հետևյալ հղումով՝ https://am.usembassy.gov/hy/bolton-rferl/ (այցելվել է 08.11.2019թ.):
[66] Հայ-իրանական սահմանն ամեն պահի կարող է փակվել. Փաշինյան (01.11.2018), հասանելի է հետևյալ հղումով՝ https://armeniasputnik.am/armenia/20181101/15441453/armenia-iran-sahman.html (այցելվել է 08.11.2019թ.):

համանախագահների հայտարարություններում պարբերաբար օգտագործվում է «սուբստանտիվ բանակցություններ» տերմինը, ընդ որում՝ Վիեննայի ու Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունների համատեքստից դուրս: Իսկ հունիսին Վաշինգտոնում տեղի ունեցած՝ արտգործնախարարների հանդիպումից հետո Ադրբեջանի արտգործնախարար Մամեդյարովը հայտարարեց Արցախում միջազգային խաղաղապահ ուժեր տեղադրելու միջնորդների առաջարկի մասին:[67]

Թեև դեռ հայտնի չէ, թե որքանով են Մամեդյարովի հայտարարությունները համապատասխանում իրականությանը, սակայն ակնհայտ է, որ Իրանը միշտ սկզբունքորեն դեմ է եղել խաղաղապահների տեղակայնմանը: Այն, թե խաղաղապահների հնարավոր տեղակայումը տարածաշրջանում կայունացնող, թե՞ ապակայունացնող հետևանքներ կունենա, կախված կլինի դրանց ներկայացուցչական կազմից և աշխարհաքաղաքական բևեռների իրական մտադրություններից: Մի բան հստակ է, որ Արցախի ու տարածաշրջանի անվտանգության ամենաապահով երաշխավորը Հայաստանում միշտ համարվել է հայ զինվորը, և մեծ մասամբ այս ընկալումը մինչ այս հաջողվել է ճիշտ մատուցել նաև միջազգային հանրությանը:

Իրանի դեմ լարվածության աճի բոլոր վերոհիշյալ սցենարները որոշակի ռիսկեր են պարունակում նաև Հայաստանի տարածաշրջանային մեկուսացման ու տնտեսության համար: Սահմանի փակման ռիսկերի մասին արդեն նշեցինք. այն կարող է էական վնաս հասցնել Հայաստանին՝ հատկապես հաշվի առնելով ռուս-վրացական հարաբերություններում առկա անորոշությունը: Իրանը Հայաստանն արտաքին աշխարհին կապող ցամաքային հիմնական՝ վրացական ուղղության միակ այլընտանքն է, և եթե հյուսիսային ուղղությամբ խոչընդոտներ են առաջանում, Հայաստանը կարողանում է դրանք որոշակիորեն հաղթահարել հարավային ուղղության հաշվին:

Իրանի դեմ պատժամիջոցները խստացնելու և դրանցում որոշ երկրների համար սահմանված բացառությունները վերացնելու ամերիկյան իշխանությունների քաղաքականությունը ի վերջո կարող է ազդել նաև Հայաստանի տնտեսության վրա: Այս տեսանկյունից արդեն իսկ երևում են որոշակի նշաններ. այս տարվա մայիսին տեղեկություն տարածվեց, որ Հայաստանի բանկերից մեկը իր հաճախորդներին առաջարկել է «ձեռնպահ մնալ Իրանի հետ կապված բեռնափոխադրումներից կամ Իրանի տարածքով փոխադրումների դիմաց բանկային հաշվեհամարով փոխանցումներ կատարելուց, քանի որ հնարավոր են փոխանցման չեղարկում կամ

[67] В Нагорном Карабахе могут появиться международные миротворцы (24 июня 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://regnum.ru/news/polit/2653667.html (այցելվել է 08.11.2019թ.):

դրամական միջոցների սառեցում»[68]: Բանկի նման վարքագիծը ենթադրում է, որ ամերիկյան կողմից համապատասխան ազդակներ են եղել. այս տեսանկյունից արժե ևս մեկ անգամ հիշել Բոլթոնի երևանյան հարցազրույցը, որտեղ վերջինս հստակ նշում էր Իրանի դեմ ճնշումը մեծացնելու անհրաժեշտության մասին:

Վերջին տարիներին որոշակի քայլեր են ձեռնարկվել հայ-իրանական տնտեսական հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ: Վերջին տասը տարում երկկողմ ապրանքաշրջանառությունը աճել է ավելի քան 60%-ով՝ 2008թ. համեմատությամբ, 2018-ին երկու երկրների առևտրի շրջանառությունը 228 մլն-ից հասել է 365 մլն դոլարի: Ընդ որում՝ այդ ժամանակահատվածում զգալիորեն աճել է Հայաստանից Իրան արտահանումը՝ շուրջ 4 անգամ[69]: Իրանը ներկայումս ապահովում է Հայաստանին մատակարարվող բնական գազի շուրջ 15%-ը, ինչպես նաև քննարկման փուլում են գտնվում Հայաստանի տարածքով իրանական գազի տարանցման ծրագրեր:

Վերջերս Իրանի խորհրդարանը վավերացրեց ԵԱՏՄ-ի հետ ազատ առևտրի մասին համաձայնագիրը, երկկողմ հարաբերությունների օրակարգում գտնվում են էներգետիկ, ենթակառուցվածքների և այլ ոլորտներում համագործակցության խորացման մի շարք ծրագրեր: Չնայած Հայաստանում իշխանափոխությունից հետո երկկողմ շփումների տեմպը մի փոքր ընկել է, այնուամենայնիվ Իրանը շարունակում է մնալ Հայաստանի տնտեսության համար կարևորագույն ուղղություններից մեկը: Ուստի, Իրանի շուրջ ստեղծված ճգնաժամի զարգացման տարբեր սցենարներն ուսումնասիրելիս շատ կարևոր է հաշվի առնել նաև դրանց տնտեսական էֆեկտը Հայաստանի համար:

5. ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես տեսնում ենք, Իրանի շուրջ ստեղծված ճգնաժամը Հարավային Կովկասի և մասնավորապես Հայաստանի համար մեծ ռիսկեր է պարունակում, ընդ որում՝ այդ ռիսկերը պահպանվում են իրադարձությունների զարգացման վերը թվարկված բոլոր սցենարների պարագայում: Այս վերլուծությունը հնարավորություն է տալիս վեր հանել այդ ռիսկերի միայն առավել ակնհայտ, միանշանակորեն երևացող դրվագները, մինչդեռ Հայաստանի Հանրապետության անվտանգության տեսանկյունից շատ

[68] Իրանի նկատմամբ պատժամիջոցներն արդեն անդրադառնում են Հայաստանի վրա, իսկ պատկան մարմինները լռում են. Ոսկանյան (31.05.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://news.am/arm/news/515866.html (այցելվել է 08.11.2019թ.):
[69] հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.aniarc.am/2019/06/10/armenia-iran-trade-since-1995/ (այցելվել է 08.11.2019թ.):

կարևոր է ունենալ Իրանում ստեղծված իրավիճակի զարգացման տարբեր սցենարներին արձագանքելու հստակ ռազմավարություն: Միաժամանակ կարևոր է Հայաստանում հանրային ուշադրության կոնսոլիդացումը երկրի ազգային անվտանգության խնդիրների շուրջ, այդ թվում՝ հաշվի առնելով տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները և դրանց հնարավոր հետևանքները:

Նեղուցներում ճգնաժամի խորացումը, ինչպես նշվեց, կհանգեցնի էներգակիրների համաշխարհային գների բարձրացման, որը Ադրբեջանին թույլ կտա հաղթահարել տնտեսական աճի տեմպերի նվազման վերջին տարիների միտումը: Էներգակիրների գների բարձրացումը դրա ներմուծումից կախված երկրների, այդ թվում՝ Հայաստանի տնտեսության համար բացասական ազդեցություն կունենա: Պարսից ծոցում ճգնաժամը էականորեն կվնասի նաև Իրանի տնտեսությանը, և Հայաստան-Իրան տնտեսական համագործակցության հեռանկարները ավելի անորոշ կդառնան: Համաշխարհային տնտեսության վրա դրա բացասական ազդեցությունը նույնպես չի նպաստի Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Իրանի և տարածաշրջանի հակահիրանական ուժերի, այդ թվում՝ ԱՄՆ-ի, Իսրայելի և Սաուդյան Արաբիայի միջև անուղղակի կամ միջնորդավորված պատերազմը զգալիորեն կնպաստի տարածաշրջանում ահաբեկչական կազմակերպությունների ակտիվացմանը: Բացի այդ, ցանկացած պահի այն կարող է լոկալ պատերազմից վերածվել տարածաշրջանային պատերազմի՝ ընդգրկելով նաև Հարավային Կովկասը: Տարածաշրջանում լարվածության աճը կարող է թուլացնել Հարավային Կովկասում Իրանի կայունացնող դերակատարությունը, քանի որ վերջինս ստիպված կլինի իր ուշադրությունը կենտրոնացնել այլ ուղղությունների վրա:

Բացի այդ, հակահիրանական կոալիցիայի ձևավորման հեռանկարը կարող է աշխարհաքաղաքական ընտրության առաջ կանգնեցնել տարածաշրջանի հատկապես փոքր երկրներին. այս դեպքում Իրանի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև Հայաստանի մանևրելու հնարավորությունները նվազագույնի կհասցվեն: Իրանի դեմ անուղղակի պատերազմի հարթակ կարող են դառնալ «Մեծ Մերձավոր Արևելքի» բոլոր կոնֆլիկտային գոտիները, այդ թվում՝ արցախա-ադրբեջանական սահմանը:

ԱՄՆ-ի կողմից Իրանին թիրախային հարվածներ հասցնելը, ուղղակի ներխուժումը կամ պատահականության հետևանքով երկու երկրների միջև լայնածավալ պատերազմի բռնկումը թերևս ամենամեծ ռիսկերն են պարունակում Հայաստանի համար: Այդ պատերազմի հետևանքները կարող են բազմազան լինել՝ սկսած միգրացիոն ներհոսքից, ահաբեկչական ռիսկերի ավելացումից, հայ-

իրանական սահմանի անվտանգության և տնտեսական հարաբերությունների ճակատագրից, այլ երկրների կողմից տարածաշրջանում ստեղծված քաոսից օգտվելու հեռանկարից, վերջացրած Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանը էլ ավելի մեկուսացնելու, Արցախում ռազմական սադրանք հրահրելու հնարավորություններից:

Իրանի դեմ լայնածավալ պատերազմի դեպքում Հայաստանը միանշանակ ստիպված կլինի աշխարհաքաղաքական ընտրության կատարել: Հայ-ռուսական հարաբերությունների վերջին շրջանի լարվածությունը, իշխանափոխությունից հետո երկրում արևմտամետ և ամերիկյան տարբեր ՀԿ-ների հետ ասոցացվող անձանց և կազմակերպությունների դիրքերի ամրապնդումը, Վրաստանի հետ կառուցողական հարաբերությունների պահպանման անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ Հայաստանում ռուսական ռազմաբազայի, սահմանապահ զորքերի առկայությունը, հայ-ռուսական տնտեսական, ռազմաքաղաքական ամուր կապերը, Հայաստանի մասնակցությունը ՀԱՊԿ-ին և ԵԱՏՄ-ին այս աշխարհաքաղաքական ընտրությունն ավելի են բարդացնում:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի կողմից Իրանի դեմ պատժամիջոցների խորացման և օղակը սեղմելու սցենարին, ապա Հայաստանի համար դրա սպառնալիքները նույնպես հնարավոր չէ թերագնահատել: Թեև այս պարագայում դրանք կարող են լինել առավելապես տնտեսական բնույթի, սակայն հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը, մեծ են նաև տարածաշրջանային մեկուսացման ռիսկերը:

Իրանի շուրջ ստեղծված ճգնաժամի վերլուծությունը հնարավորություն է տալիս դուրս գալ լոկալ՝ ներհայաստանյան մտածողության դաշտից և Հայաստանում քաղաքական օրակարգը դիտարկել առնվազն տարածաշրջանային, եթե ոչ գլոբալ քաղաքական դասավորվածության դիտանկյունից: Մինչ մենք զբաղված ենք ներքին թշնամիների փնտրտուքով, Հայաստան-Արցախ բաժանարար գծերի անցկացմամբ, տարածաշրջանի երկրները առավելապես զբաղված են արտաքին կոալիցիաների ձևավորմամբ և Իրանի շուրջ խորացող ճգնաժամի պայմաններում մանևրելու հնարավորինս մեծ դաշտի ձևավորմամբ:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի համար հատկապես ճակատագրական կարող են լինել հայ-ռուսական հարաբերություններում հավելյալ խնդիրների ստեղծումը և ՌԴ-ի գլխավորած ռազմաքաղաքական կոալիցիաների՝ առաջին հերթին ՀԱՊԿ-ի դերի թերագնահատումը: Ցավոք, պետք է նկատենք՝ վերջին շրջանի զարգացումները ավելի են խորացնում այս ուղղությամբ առկա մտահոգությունները:

Իրանի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ ռազմավարական լուծումներ առաջարկելու տեսանկյունից մեծ անելիք ունի հատկապես Հայաստանի անվտանգության խորհուրդը՝ համագործակցելով այլ պետական, ոչ պետական կառույցների և մասնագիտական, փորձագիտական շրջանակների հետ: Այս տեսանկյունից հատկապես կարևոր է ՀՀ անվտանգության նոր ռազմավարության մշակման գործում համարժեք մասնագիտական ներուժի ներգրավումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. https://www.atlanticcouncil.org/publications/issue-briefs/avenues-for-conflict-in-the-gulf-a-matrix-game-simulation
2. http://ru.valdaiclub.com/a/highlights/dilemma-bezopasnosti/
3. http://ru.valdaiclub.com/a/highlights/iran-irak-na-povestke-dnya-dobrososedstvo/
4. http://ru.valdaiclub.com/a/highlights/iran-pravila-ssha/
5. http://ru.valdaiclub.com/a/highlights/tankery-kto-morgnyet/
6. https://168.am/2019/06/26/1141190.html
7. https://am.usembassy.gov/hy/bolton-rferl/
8. https://armeniasputnik.am/armenia/20181101/15441453/armenia-iran-sahman.html
9. https://breakingdefense.com/2019/06/us-wants-allies-to-do-more-in-gulf-but-theyre-already-there/
10. https://carnegie.ru/commentary/79251
11. https://carnegieendowment.org/2019/05/16/we-led-successful-negotiations-with-iran.-trump-s-approach-isn-t-working-pub-79141
12. https://carnegieendowment.org/2019/05/21/saudi-arabia-and-israel-are-pushing-us-to-confront-iran.-trump-shouldn-t-take-bait-pub-79181
13. https://haqqin.az/news/150345
14. https://nationalinterest.org/blog/buzz/4-million-barrels-oil-halted-how-us-iran-war-could-get-nasty-63112
15. https://nationalinterest.org/blog/buzz/could-irans-drones-start-sinking-oil-tankers-and-start-war-62442
16. https://nationalinterest.org/blog/buzz/how-iran-could-really-hurt-america-and-world-close-strait-hormuz-62542
17. https://nationalinterest.org/blog/buzz/now-time-invade-iran-62457
18. https://nationalinterest.org/feature/attacking-iran-would-unleash-chaos-middle-east-62582
19. https://nationalinterest.org/feature/irans-path-negotiations-trumps-america-63012

20. https://nationalinterest.org/feature/pompeo-presents-dire-assessment-iran-situation-62557

21. https://news.am/arm/news/515866.html

22. https://news.am/arm/print/news/520314.html

23. https://regnum.ru/news/2649477.html

24. https://regnum.ru/news/polit/2638184.html

25. https://regnum.ru/news/polit/2648255.html

26. https://regnum.ru/news/polit/2649577.html

27. https://regnum.ru/news/polit/2653667.html

28. https://regnum.ru/news/polit/2655396.html

29. https://ria.ru/20190519/1553581668.html

30. https://ru.valdaiclub.com/a/highlights/iran-i-ssha-tolko-vyigrayut/

31. https://ru.valdaiclub.com/a/highlights/iran-pravila-ssha/

32. https://ru.valdaiclub.com/a/highlights/iran-stavit-ultimatum/

33. https://ru.valdaiclub.com/a/highlights/ssha-iran-bitva/

34. https://ru.valdaiclub.com/a/highlights/ssha-iran-chem-chrevata/

35. https://ru.valdaiclub.com/a/highlights/tankery-kto-morgnyet/

36. https://sputniknews.com/us/201906241076029397-pompeo-departs-for-saudi-arabia-uae-to-build-coalition-against-state-sponsor-of-terror-iran/

37. https://tass.ru/ekonomika/6595505

38. https://twitter.com/realDonaldTrump/status/1143128642878410752

39. https://worldview.stratfor.com/article/2019-third-quarter-forecast-geopolitics-global-business-risk-q3

40. https://worldview.stratfor.com/article/factors-could-push-us-and-iran-war

41. https://worldview.stratfor.com/article/iran-going-all-against-us-trump-nuclear-oil-tanker-hormuz

42. https://worldview.stratfor.com/article/iran-shoots-down-us-drone-us-military-strike-iran

43. https://worldview.stratfor.com/article/map-military-positions-united-states-iran-conflict-perisan-gulf-strait-hormuz-middle-east

44. https://worldview.stratfor.com/article/strait-hormuz-attack-oil-tankers-threatens-deepen-us-iran-standoff-saudi-prices

45. https://www.aniarc.am/2019/06/10/armenia-iran-trade-since-1995/

46. https://www.apnews.com/3e2d08074a4f4256ba6ee379cdb168f7

47. https://www.cfr.org/article/escalating-us-iran-tensions-whats-next

48. https://www.cfr.org/article/strait-hormuz-us-iran-maritime-flash-point

49. https://www.cfr.org/article/taking-tehran

50. https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/iran/taking-us-and-iran-collision-course

51. https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/iran/iran-challenges-remaining-partners-save-nuclear-deal

52. https://www.crisisgroup.org/trigger-list/iran-us-trigger-list

53. https://www.csis.org/analysis/iranian-missile-threat

54. https://www.csis.org/analysis/strategic-threat-iranian-hybrid-warfare-gulf

55. https://www.csis.org/analysis/us-response-iranian-brinkmanship

56. https://www.foreignaffairs.com/articles/iran/2019-05-20/path-war-iran

57. https://www.iiss.org/blogs/analysis/2019/03/iran-and-europe-rise-of-tensions

58. https://www.iiss.org/blogs/analysis/2019/03/iran-new-anti-ship-missile-test

59. https://www.iiss.org/blogs/analysis/2019/04/more-iranian-sanctions-for-what-purpose

60. https://www.iiss.org/blogs/analysis/2019/06/iran-in-the-gulf

61. https://www.iiss.org/blogs/survival-blog/2019/04/us-iran-tensions-oil

62. https://www.latimes.com/opinion/op-ed/la-oe-miller-sokolsky-iran-trump-war-attack-military-forces-20190519-story.html

63. https://www.nytimes.com/2019/05/13/world/middleeast/saudi-arabia-oil-tanker-sabotage.html

64. https://www.politico.eu/article/us-iran-tensions-rise-top-eu-adviser/

65. https://www.presstv.com/Detail/2019/05/26/596951/Iran-nonaggression-pact-Arab-states-Persian-Gulf-Zarif

66. https://www.rand.org/blog/2019/04/the-us-designated-the-revolutionary-guards-as-a-terrorist.html

67. https://www.rand.org/blog/2019/04/yes-the-us-could-be-drawn-into-yet-another-big-war.html

68. https://www.rand.org/blog/2019/05/can-anyone-save-the-iran-nuclear-deal-now.html

69. https://www.rand.org/blog/2019/05/irans-network-of-fighters-in-the-middle-east-arent.html

70. https://www.rand.org/blog/2019/05/the-us-and-iran-beyond-the-rhetoric.html

71. https://www.rand.org/blog/2019/06/the-costs-of-confrontation-with-iran-are-mounting.html

72. https://www.reuters.com/article/us-usa-iran-germany-trade/germany-iran-trade-collapses-under-us-sanctions-report-idUSKCN1TT040

73. https://www.theguardian.com/world/2019/may/07/iran-to-announces-partial-withdrawal-from-nuclear-deal

74. https://www.washingtonpost.com/world/iran-to-take-steps-to-reduce-its-commitment-to-landmark-nuclear-deal/2019/05/07/90cc3b1c-70fe-11e9-9331-30bc5836f48e_story.html?noredirect=on&utm_term=.75e1f9051b9c

75. https://www.washingtonpost.com/world/national-security/trump-says-he-is-not-seeking-regime-change-in-iran/2019/05/27/94d3053a-808d-11e9-933d-7501070ee669_story.html?utm_term=.aa4be5f1d2de

76. https://eadaily.com/ru/news/2019/07/07/lyubuyu-voennuyu-operaciyu-ssha-protiv-sebya-iran-rascenit-kak-nachalo-voyny

77. https://worldview.stratfor.com/article/why-us-plan-protect-oil-tankers-persian-gulf-wont-deter-iran-attacks-security-military

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*